ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում

Կ-362²-23.08.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինության գործունեության օբյեկտներն, ելնելով դրանց# ծավալից, նշանակությունից, կարևորությունից ու բարդությունից, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունից, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հինգ աստիճանների (կատեգորիայի):»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. «իրավաբանական անձինք,» բառերից հետո լրացնել «անհատ ձեռնարկատերերը,» բառերը.
2. «(կառուցապատողներ, քաղաքաշինական փաստաթղթեր մշակողներ, շինարարություն իրականացնողներ, քաղաքաշինական գործունեության վերահսկողություն իրականացնողներ և այլն)» բառերը փոխարինել «(կառուցապատողներ, քաղաքաշինական փաստաթղթեր կազմողներ, քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն իրականացնողներ, շինարարություն իրականացնողներ, շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնողներ, քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայություններ մատուցողներ, քաղաքաշինական գործունեության վերահսկողություն իրականացնողներ և պատասխանատու մասնագետներ)» բառերով:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի ՝

1. 3-րդ մասի «ա» կետում, 5-րդ և 6-րդ մասերում «մշակողներին», «մշակողը» և «մշակողի» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով փոխարինել «կազմող» բառով.
2. 4-րդ մասի «ը» կետում «այլ բան նախատեսված չէ» բառերը փոխարինել «ամրագրված է նման պահանջ» բառերով.
3. 4-րդ մասի «թ» կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

4. «թ) օրենքով սահմանված կարգով ապահովել շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված աշխատանքների նկատմամբ:».

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1 - րդ հոդվածով.

« **Հոդված 7.1. Քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան քաղաքաշինության գործունեության սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները**

1. Քաղաքաշինական փաստաթղթեր կազմող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքները և պարտականությունները.

1) քաղաքաշինական փաստաթղթեր կազմող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն են՝

ա. պետական, տեղական ինքնակառավարման և այլ մարմիներից ձեռք բերել նախագծման համար անհրաժեշտ ելակետային տվյալներ, օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում և այլն) նախագծման տեխնիկական պայմաններ և#կառուցապատողի կողմից տեխնիկական բնութագրում նշված լրացուցիչ պայմանների (առկայության դեպքում) կատարման համար անհրաժեշտ ելակետային նյութեր.

բ. նախագծային փաստաթղթերի կազմում ընդգրկել լրացուցիչ նյութեր.

գ. մասնակցել օրենքով նախատեսված նախագծի համաձայնեցման փուլերին.

2) քաղաքաշինական փաստաթղթեր կազմող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի պարտականություններն են՝

ա. կատարել օրենսդրության և քաղաքաշինական փաստաթղթերի նախագծման թույլտվության պահանջները.

բ. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքով և իրավական այլ ակտերով ապահովել քաղաքաշինական փաստաթղթեր մշակող պատասխանատու մասնագետների հեղինակային իրավունքները՝ աշխատանքային պայմանագրով նման պահանջի առկայության դեպքում:

2. Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքները և պարտականությունները.

1) փորձաքննություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն են՝

ա. Քաղաքաշինական փաստաթղթերի և մեթոդաբանության վերաբերյալ փորձագիտական եզրակացության տրամադրելը.

բ. քաղաքաշինական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն նախապատրաստելու համար կառուցապատողից, ինչպես նաև նախագիծը կազմող աշխատանքների պատասխանատու կապալառուից պահանջել

ներկայացված ճարտարապետաշինարարական լուծումները հիմնավորող օրենքով սահմանված փաստաթղթեր.

գ. նյութերի լրակազմված չլինելու դեպքում դրանք վերադարձնել պատվիրատուին՝ անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու առաջարկով.

2) փորձաքնություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի պարտականություններն են՝

ա. փորձաքննության ընթացքում քաղաքաշինական գործունեության օբյեկտի ուսումնասիրությանը, վերլուծությանը և գնահատմանը փորձագետների մասնակցությունն ապահովելը.

բ. քաղաքաշինական փաստաթղթերով նախատեսված նախագծային լուծումների համապատասխանության հավաստումը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

գ. հրաժարվել իրենց կողմից կազմված նախագծերի փորձաքննությունն իրականացնելուց.

3) փորձաքնություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտը կարող է ունենալ նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

3. Շինարարություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքները և պարտականությունները.

1) շինարարություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն են՝

ա. հրաժարվել կառուցապատողի տրամադրած շինանյութերը, շինվածքները, կոնստրուկցիաները և ինժեներական սարքավորումներն օգտագործելուց, եթե դրանք չեն համապատասխանում գործող ստանդարտներին կամ նորմատիվ պահանջներին.

բ. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերում նորմատիվ բնույթի խախտումներ հայտնաբերելիս դադարեցնել շինարարական աշխատանքները և պահանջել նախագծային փաստաթղթերի այլընտրանքային փորձաքննություն

2) շինարարություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի պարտականություններն են՝

ա) շինարարության ընթացքում ապահովել հաստատված նախագծի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները.

բ) սեփական միջոցներով վերացնել պայմանագրով նախատեսված ժամկետում (բայց ոչ ուշ, քան շինարարության ավարտական ակտը ձևակերպելու օրվանից մեկ տարվա ընթացքում) հայտնաբերված թերությունները, եթե դրանք առաջացել են շինարարության ընթացքում իրենց թույլ տված խախտումների հետևանքով.

4. շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն ու պարտականությունները.

1) շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն են՝

ա. շինարարության իրականացման պատասխանատու մասնագետներին տալ ցուցումներ և հրահանգներ պետական ստանդարտներին, տեխնիկական պայմաններին և այլ նորմատիվային փաստաթղթերին, ինչպես նաև ճարտարապետաշինարարական նախագծին չհամապատասխանող նյութերի, շինվածքների կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների օգտագործումը բացառելու մասին.

բ. հրաժարվել շինարարության որակի տեխնիկական հսկողությունից, եթե կառուցապատողի և (կամ) շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպության կողմից ինքնակամ իրականացված գործողությունների արդյունքում գրանցվել է նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների կամ ճարտարապետաշինարարական նախագծային լուծումների այնպիսի շեղումներ, որոնք կարող են նվազեցնել քաղաքաշինական գործունեության օբյեկտի կրողունակությունը, կայունությունը և ազդել հուսալիության վրա.

գ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել տեխնիկական հսկողության իրականացման հետ կապված պաշտոնատար անձանց գործողությունները.

դ. շինարարական աշխատանքների բոլոր փուլերում անհրաժեշտ տեխնիկական հետազոտություններ կամ փորձարկումներ կատարելու միջոցով կարող է ստուգել շինարարական աշխատանքների համապատասխանությունը ճարտարապետաշինարարական նախագծերին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներին.

2) շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի պարտականություններն են՝

ա. շինարարության բոլոր փուլերում ստուգել շինարարական աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը ճարտարապետաշինարարական նախագծով տրված լուծումներին և պահանջներին.

բ. շինարարության բոլոր փուլերում ստուգել շինարարական աշխատանքների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին և ստուգման արդյունքներն արձանագրել կատարողական փաստաթղթերում.

գ. քաղաքաշինական գործունեության օբյեկտի կրողունակությանը, կայունությանը և հուսալիությանը սպառնացող թերությունների հայտնաբերման կամ իր կողմից տրված ցուցումները ողջամիտ ժամկետում չկատարելու կամ տեխնիկական վթարների առաջացման դեպքում դադարեցնել շինարարությունը և այդ մասին 48 ժամվա ընթացքում նշված կամ էլեկտրոնային գրանցամատյաններում առկա հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով (այսուհետ՝ Կապի

միջոցներ) իրազեկել կառուցապատողին և քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին.

դ. պահպանել շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման կարգով սահմանված պահանջները.

ե. անավարտ աշխատանքների և թերությունների հայտնաբերման դեպքում օբյեկտի շինարարական կապալառու կազմակերպության հետ կազմել դրանց ցանկը, սահմանել դրանց վերացման ժամկետները.

զ. տեղեկացնել կառուցապատողին հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերի, տեխնիկական պայմանների, շինարարական նորմերի և կանոնների խախտումներով կամ անորակ նյութերով, շինվածքներով կամ կոնստրուկցիաներով կատարված շինարարական աշխատանքների մասին.

է. հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ շինարարություն իրականացնող քաղաքաշինական գործունեության սուբյեկտին տալ պարտադիր կատարման ենթակա ցուցումներ և հրահանգներ.

ը. մասնակցել շինարարական կազմակերպությունների կողմից դադարեցված քաղաքաշինական գործունեության օբյեկտների, դրանց առանձին մասերի, կոնստրուկցիաների և հանգույցների միջանկյալ ընդունմանը՝ դադարեցումից ոչ ուշ քան 3 ամսվա ընթացքում, ինչպես նաև ձևակերպված համապատասխան ակտով նրանց հանձնելուն՝ նշելով այդ օբյեկտների փաստացի վիճակը.

3) քաղաքաշինական գործունեության օբյեկտի շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացումը տվյալ շինարարությունն իրականացնող կապալառու կազմակերպության կողմից արգելվում է.

4) շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող սուբյեկտը պետք է ունենա օրենքով սահմանված համապատասխան քաղաքաշինական գործունեության իրավունք:

5. Քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայություններ մատուցող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն ու պարտականությունները.

1) քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայություններ մատուցող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն են՝

ա. շենքերի և շինությունների առկա նախագծային փաստաթղթերի և շահագործման պայմանների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերում,

բ. իրականացնել շենքերի և շինությունների անձնագրավորում.

գ.# իրականացնել ինժեներաերկրաբանական հետախուզում, ինժեներապաշտպան միջոցառումներ և դրանց արդյունքում կազմել նյութեր.

դ. իրականացնել գեոդեզիական ծառայություններ.

2) քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայություններ մատուցող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի պարտականություններն են՝

ա. հետազննման արդյունքներով, վնասված տարրերի ուժեղացման կամ փոխարինման և վնասվածքների առաջացման պատճառների վերացման վերաբերյալ տալ առաջարկություններ:

բ.# ընտրել հետախուզման և հետազննման համար բավարար մեթոդներ և տալ խնդիրների լուծման վերջնական առաջարկություններ.

գ. կոնստրուկցիաների նյութերի ամրության և այլ բնութագրերի որոշման ժամանակ առավելություն տալ հսկողության չքայքայող մեթոդներին (մասնավորապես բետոնի ամրությունը որոշել մեխանիկական գործողության սարքերով).

դ. իրականացնել շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն՝ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

6. Սույն հոդվածում նշված I դասի քաղաքաշինական գործունեություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտները պարտավոր են ունենալ պաշտոնական ինտերնետային կայք, որն առնվազն պետք է պարունակի տեղեկատվություն ծառայությունների, մասնագետների վերաբերյալ, ինչպես նաև ապահովի հետադարձ կապի հնարավորություն:

7. Քաղաքաշինության գործունեության սուբյեկտները պարտավոր են՝

1) քաղաքաշինական գործունեության օբյեկտների վերաբերյալ պահպանել օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունները.

2) ապահովել քաղաքաշինական գործունեության օբյեկտներում քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան գործելակարգով սահմանված աշխատանքների և ծառայությունների կատարումը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել վիճակագրական և այլ տեղեկություններ.

4) իրականացնել Օրենքով սահմանված այլ պարտականություններ:»:

Հոդված 5. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 8-րդ 9-րդ հոդվածները:

Հոդված 6. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ[1]-զ[5]» կետերով՝.

«զ[1]) հաստատում է հավաստագրման, վերաորակավորման և թեստավորման կարգը, հավաստագրերի ձևերը, լիցենզավորված անձանց և հավաստագրված մասնագետների ռեգիստրի ձևավորման, տվյալների փոփոխության, լրացման, գրանցամատյանի վարման կարգը, գրանցամատյանից օգտվելու հասանելիություն ունեցող պետական մարմինների

ցանկը, լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման և մոնիթորինգի իրականացման կարգը.

q[2]) հաստատում է քաղաքաշինության բնագավառում լիցենզիա և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և ծառայությունների, ինչպես նաև ըստ ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) քաղաքաշինական գործունեության օբյեկտների դասակարգման ցանկերը և մեթոդաբանությունը.

q[3]) հաստատում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունք ունեցող մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման (այսուհետ նաև ՇՄԶ) կազմակերպման և հավաստագրման հնգամյա ժամանակացույցը.

q[4]) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների նախաձեռնությամբ կամ հրավերով օտարերկրյա մասնագետների և կազմակերպությունների կարճաժամկետ քաղաքաշինության գործունեության թույլտվության տրամադրման կարգը.

q[5]) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ հաստատում է պատասխանատու մասնագետի էթիկայի կանոնները.»:

Հոդված 7. Օրենքի 10.1-րդ հոդվածի՝

1. 3-րդ մասի 21-րդ կետում «բարձր և բարձրագույն» բառերը փոխարինել «IV և V» բառերով.

2. 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 27-35 կետերով՝

«27) հաստատում է սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված մասնագիտական գործունեության տեսակներին և ենթատեսակներին համապատասխան պահանջվող մասնագիտական որակավորումների ցանկը.

28) հաստատում է սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան քաղաքաշինական գործունեության օբյեկտներում իրականացվող աշխատանքների, և ծառայությունների մատուցման գործելակարգերը և պատասխանատու մասնագետների մասնագիտական բնութագրերը.

29) հաստատում է որակավորման, էթիկայի և որակի գնահատման հանձնաժողովների անհատական կազմը, աշխատակարգը, անդամների ընտրության և գործերի քննության կարգերը, շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը.

30) հաստատում է լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվության և մասնագետների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը, թեստավորման հարցաշարերը, հայտարարության տեքստին ներկայացվող պահանջները.

31) հաստատում է ՇՄԶ ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը և մասնակցությանը ներկայացվող պահանջները, յուրաքանչյուր

մասնագիտության գծով շնորհվող ՇՄՋ կրեդիտների տեսակները, քանակը և դրանց շնորհման չափորոշիչները.

32) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինության բնագավառում հավաստագրված մասնագետների գրանցումը.

33) օրենքով սահմանված դեպքերում իրականացնում է մասնագետների հավաստագրումը և հաստատում մասնագետներին տրվող հավաստագրերը.

34) իրականացնում է I, II և III կարգերի մասնագետների և I, II և III դասերի գործունեություն իրականացնող լիցենզավորված կազմակերպությունների գրանցամատյանների վարումը, որտեղ առնվազն ներառվում է մասնագետների անհատական տվյալների (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի), կրթության, որակավորման, վերաորակավորման, մասնագիտացման, մասնագիտական գործունեության և ՇՄՋ հավաստագրերի, լիցենզավորված անձի տվյալներ (անվանումը և գտնվելու վայրը, ազգանունը, անունը, բնակության վայրը և հաշվառման հասցեն), լիցենզիայի գործունեության տեսակի, գործողության ժամկետի, գործողության ժամկետների երկարաձգումների, լիցենզիայի, ներդիրի կամ հավաստագրերի վերաձևակերպման, գործողության կասեցման, գործողության դադարեցման և վարկանիշավորման վերաբերյալ տեղեկություններ, օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ տեղեկություններ.

35) սահմանում է լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների կողմից աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման որակի գնահատման չափորոշիչներ:».

3. 3-րդ մասի 26-րդ կետի «:» նշանը փոխարինել «.» նշանով:

Հոդված 8. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ V.1-ին գլխով.

«Գ Լ ՈՒ Խ V.1

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդված 11.1. Շարունակական մասնագիտական զարգացման հասկացությունը և քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեությանը ներկայացվող հիմնական պահանջները

1. ՇՄՋ՝ քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց մասնագիտական կարողությունների,

ունակությունների և հմտությունների զարգացման անընդհատությունն ապահովող գործընթաց է:

2. Քաղաքաշինության բնագավառում հավաստագրված մասնագետները մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող ֆիզիկական անձիք են, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել են մասնագիտական գործունեության ՇՄՋ համապատասխան հավաստագիր և գրանցվել են քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից վարվող մասնագետների գրանցամատյանում (այսուհետ Հավաստագրված մասնագետ):

3. Մասնագետներն իրենց աշխատանքային փորձի, կատարված աշխատանքների ծավալի և բարդության դասակարգվում են I, II և III կարգի.

1) I կարգի մասնագետը կարող է քաղաքաշինական գործունեություն իրականացնել I, II, III, IV և V ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) քաղաքաշինական գործունեության օբյեկտներում և հանդես գալ, որպես I, II և III դասի քաղաքաշինական գործունեության տեսակների պատասխանատու մասնագետ.

2) II կարգի մասնագետը կարող է քաղաքաշինական գործունեություն իրականացնել I, II, III, ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) քաղաքաշինական գործունեության օբյեկտներում և հանդես գալ, որպես II և III դասի քաղաքաշինական գործունեության տեսակների պատասխանատու մասնագետ.

3) III կարգի մասնագետը կարող է քաղաքաշինական գործունեություն իրականացնել I և II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) քաղաքաշինական գործունեության օբյեկտներում և հանդես գալ, որպես III դասի քաղաքաշինական գործունեության տեսակների պատասխանատու մասնագետ:

4. Քաղաքաշինության բնագավառի մասնագիտական գործունեության տեսակներին համապատասխան մասնագիտական որակավորումների պահանջները հաստատվում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի իրավական ակտով:

5. Այլ պետություններում քաղաքաշինության բնագավառի մասնագիտական կրթություն ստացած անձինք (ներառյալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիները) Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինության բնագավառում պատասխանատու մասնագետի գործունեություն կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա մասնագիտական կրթության փաստը հավաստող փաստաթղթերի փոխադարձ ճանաչման կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ՇՄՋ հավաստագրերի առկայության դեպքում:

6. III կարգի մասնագետի հավաստագիր կարող է ստանալ համապատասխան մագիստրոսի կրթական աստիճան ստացած, 90 տոկոս և ավելի միջին որակավորման գնահատական (ՄՈԳ) ունեցող անձը՝ օրենքով սահմանված պետական տուրքը վճարելու և հավաստագրման հայտը ոչ ուշ, քան համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունը ավարտելուց հետո երկու տարվա ընթացքում ներկայացնելու դեպքում,

հակառակ դեպքում՝ հավաստագրումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով:

7. Վերջին հինգ տարում առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեություն իրականացրած III կարգի հավաստագիր ունեցող մասնագետը կարող է հաջորդ հնգամյա փուլում հավաստագրվել որպես III կարգի մասնագետ՝ առանց ՇՄՋ կրեդիտների նվազագույն քանակի շեմը լրացնելու:

8. Վերջին հինգ տարում առնվազն երեք տարի մասնագիտական գործունեություն իրականացրած և ՇՄՋ կրեդիտների նվազագույն քանակի առնվազն 75 տոկոսը հաղթահարած համապատասխան ոլորտի մասնագետը մասնագիտական գործունեությունը շարունակելու և ՇՄՋ հավաստագիր ստանալու համար կարող է անցնել ստացված տեսական գիտելիքների և գործնական հմտությունների գնահատման գործընթաց (այսուհետ թեստավորում) և ստանալ ՇՄՋ հավաստագիր:

9. Վերջին հինգ տարում ՇՄՋ կրեդիտների նվազագույն քանակի 75 տոկոսի շեմը չհաղթահարած համապատասխան ոլորտի մասնագետի գործունեությունը ժամանակավոր կասեցվում է մինչև նոր ՇՄՋ հավաստագրի ստացումը (բացառությամբ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ կետերով սահմանված դեպքերի):

10. Քաղաքաշինության բնագավառում բազային մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցող ֆիզիկական անձը, օրենքով սահմանված կարգով կարող է մասնակցել վերարակավորման կրթական ծրագրերով անցկացվող դասընթացներին և գիտելիքների ստուգումը բարեհաջող անցնելուց հետո ձեռք բերել սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված քաղաքաշինության գործունեության տեսակին և ենթատեսակին համապատասխան ՇՄՋ հավաստագիր:

11. Վերարակավորման համար ԲՈՒՀ-ի ակադեմիական կրեդիտների նվազագույն քանակը յուրաքանչյուր վերարակավորման մասնագիտական կրթական ծրագրի համար սահմանվում է՝ առնվազն 45 ակադեմիական կրեդիտ (ԿԿՓԵՀ):

12. Վերարակավորված մասնագետին ՇՄՋ հավաստագիր չի տրվում, եթե մասնագետը չի ապահովել սույն հոդվածի 6-8-րդ կամ Օրենքի 11.4-րդ հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված պահանջները:

Հոդված 11.2 Քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակների պատասխանատու մասնագետների ՇՄՋ ապահովող միջոցառումների պլանավորումը

1. Քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակներին համապատասխան պատասխանատու մասնագետների ՇՄՋ ապահովող միջոցառումների

պլանավորումն իրականացնում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը:

Հոդված 11.3. ՇՄՋ կազմակերպման գործընթացը

1. ՇՄՋ-ն իրականացվում է այդ գործընթացի անընդհատության և բազմաձևության սկզբունքների համակցմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ՇՄՋ գործընթացի անընդհատությունն ապահովվում է յուրաքանչյուր հնգամյա շրջափուլով՝ այդ տարիների ընթացքում իրականացված մասնագիտական գործունեության, ինչպես նաև ձեռք բերված գիտելիքների և մասնագիտական հմտությունների գնահատման հիման վրա: ՇՄՋ-ի, ինչպես նաև ձեռք բերված գիտելիքների և մասնագիտական հմտությունների համար շնորհվում են ՇՄՋ կրեդիտներ:

3. ՇՄՋ բազմաձևությունն ապահովելու համար սահմանվում են հետևյալ գործունեության զարգացման տեսակները.

1) տեսական գիտելիքների զարգացում՝ Հայաստանի Հանրապետությունում կամ այլ պետություններում մասնագիտական դասընթացներին, սեմինարներին, սիմպոզիումներին, գիտական, գիտագործնական գիտաժողովներին և համագումարներին մասնակցության և (կամ) իրականացման միջոցով.

2) գործնական հմտությունների զարգացում՝ աշխատանքային տեղում մասնագիտական կատարելագործման, գիտագործնական միջոցառումներին մասնակցության և (կամ) իրականացման միջոցով.

3) ինքնակրթություն և ինքնազարգացում՝ հեռավար դասընթացների մասնակցության և (կամ) իրականացման կամ գիտական աշխատանքների, աշխատությունների հրատարակման և (կամ) գործնական ուսումնասիրությունների արդյունքների ներկայացման միջոցով:

4. Հավաստագրման համար անհրաժեշտ ՇՄՋ կրեդիտների նվազագույն քանակը յուրաքանչյուր հնգամյա փուլի համար սահմանվում է՝

1) I կարգի մասնագետների համար ՝ առնվազն 240 ՇՄՋ կրեդիտ.

2) II կարգի մասնագետների համար՝ առնվազն 160 ՇՄՋ կրեդիտ.

3) III կարգի մասնագետների համար՝ առնվազն 100 ՇՄՋ կրեդիտ.

5. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ՇՄՋ գործունեության զարգացման տեսակները քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի սահմանած կարգով կարող են իրականացնել տեղական, օտարերկրյա և (կամ) միջազգային հետևյալ կազմակերպությունները.

1) օրենքով սահմանված կարգով քաղաքաշինական կրթական ծրագրեր իրականացնող կրթական հաստատությունները.

2) քաղաքաշինական մասնագիտական հասարակական և ինքնակարգավորվող կազմակերպությունները.

3) շինարարական կամ նախագծային կազմակերպությունները.

4) քաղաքաշինական գործունեություն ծավալող այլ կազմակերպություններ:

Հոդված 11.4 ՇՄՋ հավաստագիրը և ՇՄՋ արդյունքների հավաստագրումը

1. Շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիրը՝ քաղաքաշինության բնագավառում պատասխանատու մասնագետի մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունքը հավաստող փաստաթուղթ է, որը տրվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ՇՄՋ կրեդիտներ հավաքելու և սույն հոդվածով սահմանված ժամկետներում մասնագիտական գործունեություն իրականացնելու դեպքում

2. ՇՄՋ գնահատումն իրականացվում է հավաստագրման միջոցով:

3. ՇՄՋ հավաստագիրը տրվում է հինգ տարի ժամկետով: ՇՄՋ հավաստագրի ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ մասնագետը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմին հաջորդ հինգ տարիների համար՝ ՇՄՋ հավաստագիր ստանալու նպատակով:

4. ՇՄՋ հավաստագիրը տրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների բավարարման և «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրք վճարելու դեպքում:

5. ՇՄՋ հավաստագիրը (բացառությամբ Օրենքի 11.1-րդ հոդվածի 6-8-րդ մասերով սահմանված դեպքերի) տրվում է, եթե մասնագետը.

1) ըստ վերապատրաստման մակարդակի լրացրել է սույն օրենքով սահմանված ՇՄՋ կրեդիտների նվազագույն քանակը.

2) սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված քաղաքաշինության բնագավառում իրականացվող գործունեության տեսակին և ենթատեսակին համապատասխան ունի Հայաստանի Հանրապետությունում համապատասխան բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.

3) սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված քաղաքաշինության գործունեության տեսակին և ենթատեսակին համապատասխան բակալավրի որակավորման աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում վերջին հինգ տարում ունի առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, իսկ համապատասխան մագիստրոսի որակավորման աստիճան ունենալու կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն համապատասխան

կրթության որակավորման աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում վերջին հինգ տարում ունի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն.

4) տիրապետում է հայերենին:

6. ՇՄՁ հավաստագիր չի տրվում, եթե մասնագետը չի ապահովել սույն հոդվածի 3-5-րդ կամ Օրենքի 11.1-րդ հոդվածի 6-8-րդ մասերով սահմանված պահանջները:

7. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը Հավաստագրման և թեստավորման վերաբերյալ որոշումներն ընդունում է սույն օրենքի 11 3-րդ հոդվածով սահմանված ՇՄՁ ապահովող միջոցառում իրականացնող կազմակերպությունում կամ կրթական հաստատությունում գործող սույն օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 29-րդ կետով սահմանված համապատասխան որակավորման հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա: Սակայն քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինն իրավունք ունի որոշման համար հիմք չընդունել հանձնաժողովի եզրակացությունը: Այս դեպքում նա պարտավոր է իր որոշմամբ հիմնավորել հանձնաժողովի եզրակացությունը չընդունելու պատճառները:

Հոդված 11.5. Քաղաքաշինության բնագավառի պատասխանատու մասնագետի հասկացությունը, իրավունքները և պարտականությունները

1. Պատասխանատու մասնագետ է հանդիսանում լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտին տրամադրված լիցենզիային կից համապատասխան ներդիրներում ընդգրված անձը, ով ունի ՇՄՁ հավաստագիր և գրանցված է մասնագետների գրանցամատյանում:

2. Պատասխանատու մասնագետի իրավունքներն են՝

1) օրենքով սահմանված կարգով իրենց կրթությանը, որակավորմանը և մասնագիտացմանը համապատասխան իրականացնել լիցենզավորման ենթակա և (կամ) շինարարության թույլտվություն չպահանջվող քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեություն.

2) ներկայացնել ապացուցողական հիմնավորումներ, որոնք նախատեսված չեն քաղաքաշինական փաստաթղթերով.

3) քաղաքաշինական գործունեության օբյեկտին և մեթոդաբանությանը վերաբերող հարցերի վերաբերյալ մասնագիտական կարծիքի ազատ արտահայտումը.

4) օրենքով սահմանված կարգով մասնակցել սույն օրենքի 11.3-րդ հոդվածով սահմանված ՇՄՁ գործունեության զարգացման տեսակներին.

5) դիմել սույն օրենքով նախատեսված էթիկայի հանձնաժողով՝ իր կարծիքով այլ պատասխանատու մասնագետի կողմից մասնագիտական էթիկայի կանոնների խախտման դեպքերում

6) օգտվել օրենքով սահմանված այլ իրավունքներից:

3. Պատասխանատու մասնագետի պարտականություններն են՝

1) քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնելիս առաջնորդվել քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված պարտադիր պահանջներով.

2) պահպանել օրենսդրության պահանջները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակել, լրացնել, վարել և շրջանառել քաղաքաշինական փաստաթղթերը և անձնական ստորագրությամբ վավերացնել դրանք.

4) Օրենքով սահմանված դեպքերում քաղաքաշինական գործունեության օբյեկտների վերաբերյալ պահպանել գաղտնիք պարունակող տեղեկությունները.

5) կատարելագործել իր մասնագիտական գիտելիքները և հմտությունները, մասնագիտական որակավորման պահանջներին համապատասխան մասնակցել ՇՄԶ գործընթացին.

6) իր մասնագիտական գործունեությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառում պետական կառավարման մարմնի կողմից հաստատված մասնագիտական բնութագրին համապատասխան.

7) հավաստագրված մասնագետների գրանցամատյաններում ամրագրված իր տվյալների փոփոխությունների մասին 15 օրյա ժամկետում հայտնել քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնին (բացառությամբ գործող տվյալների բազաներից ինքնաշխատ եղանակով տվյալների թարմացման դեպքերի).

8) պահպանել պատասխանատու մասնագետի էթիկայի կանոնները

9) կատարել օրենքով սահմանված այլ պարտավորություններ:

4. Պատասխանատու մասնագետները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Հոդված 11.6. ՇՄԶ հավաստագրի գործողության կասեցումը

1. ՇՄԶ հավաստագրի գործողության կասեցումը որոշակի ժամկետով կամ որոշակի պայմաններով պատասխանատու մասնագետին ՇՄԶ հավաստագրման ենթակա մասնագիտական գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկումն է:

2. ՇՄԶ հավաստագրի գործողության կասեցման ընթացքում պատասխանատու մասնագետին արգելվում է կասեցման որոշմամբ սահմանված քաղաքաշինական գործունեության օբյեկտում և ժամանակահատվածում իրականացնել աշխատանքների և ծառայությունների իրականացման գործելակարգերով սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն, բացառությամբ նրանց, որոնք ուղղված են կասեցման մասին որոշմամբ նախատեսված անհետաձգելի միջոցառումներն իրականացնելուն:

3. ՇՄԶ հավաստագրի գործողությունը կասեցնելու որոշմամբ պետք է հստակ սահմանվեն կասեցվող գործողությունը, գործառույթը կամ գործողությունները, ինչպես

նաև կասեցման պատճառները, իրավական հիմքերը և ժամկետները: Եթե, խախտման բնույթից ելնելով, դրանք կամ դրանց հետևանքները հնարավոր է վերացնել պատասխանատու մասնագետին հավաստագրման ենթակա գործունեության առանձին գործառույթները կամ հավաստագրով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկելու միջոցով, ապա այդ դեպքերում պատասխանատու մասնագետի ողջ գործողության կասեցում չի կիրառվում:

4. Սույն մասի 1-ին պարբերությունով սահմանված հավաստագրի գործողությունը կասեցնելու մասին որոշման բովանդակությանը ներկայացված դրույթներ չպարունակող ՇՄՋ հավաստագրի գործողությունը կասեցնելու մասին որոշումներն անվավեր են:

5. Եթե առկա են ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցման մեկից ավելի հիմքեր, ապա կասեցման որոշում կայացվում է յուրաքանչյուր հիմքով առանձին:

6. ՇՄՋ հավաստագրի գործողությունը կասեցված է համարվում այդ մասին քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի որոշումը պատասխանատու մասնագետին Կապի միջոցներով տեղեկացնելու օրվան հաջորդող օրվանից, եթե ՇՄՋ հավաստագրի գործողությունը կասեցնելու մասին որոշմամբ կամ օրենքով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:

7. ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցումը վերացված է համարվում կասեցման ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից: Եթե ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցման ժամկետը սահմանվել է մինչև խախտման պատճառի վերացումը, ապա ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցումը վերացված է համարվում պատասխանատու մասնագետի՝ խախտումները վերացնելու մասին հայտարարությունը (համապատասխան հիմնավորող փաստաթղթերով) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե այդ ժամկետում քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինն, նոր հանգամանքների ի հայտ գալու հիմքով, այլ որոշում չի կայացնում կամ այլ ավելի կարճ ժամկետ չի սահմանում և դրա մասին պատշաճ ձևով համապատասխան պատասխանատու մասնագետին չի հայտնում:

Հոդված 11.7. **ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցման կարգը**

1. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը օրենսդրության պահանջների խախտման պատճառով ՇՄՋ հավաստագրի գործողությունը կարող է կասեցնել միայն քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից միջնորդություն ներկայացնելու և համապատասխան որակավորման հանձնաժողովի եզրակացության համաձայն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. Որակավորման հանձնաժողովը հավաստագրի գործողության կասեցման հարցը քննարկում և համապատասխան եզրակացություն է կայացնում սույն օրենքով և հանձնաժողովի կանոնադրությամբ նախատեսված կարգով:

3. Օրենսդրության պահանջների խախտման պատճառով ՇՄՋ հավաստագրի գործողությունը կարող է կասեցվել խախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում,# իսկ շարունակվող կամ տևական խախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից՝ երեք ամսվա ընթացքում:

4. Եթե որակավորման հանձնաժողովի կողմից հավաստագրի գործողությունը կասեցնելու մասին հարցի քննարկման վերաբերյալ եզրակացությունը կայացնելուց հետո 15 օրվա ժամկետում հավաստագրի գործողության կասեցման մասին որոշում չի ընդունվում, ապա հավաստագրի գործողության կասեցման հարցը համարվում է մերժված: Այս դեպքում քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը իրավունք չունի նույն հիմքերով երկրորդ անգամ բարձրացնել հավաստագրի գործողության կասեցման հարցը:

Հոդված 11.8. ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցման դեպքերը

1. ՇՄՋ հավաստագրի գործողությունը կարող է կասեցվել՝

1) մասնագետի կողմից սույն օրենքով նախատեսված մասնագետների գրանցամատյաններում ամրագրված իր տվյալների փոփոխությունների մասին տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնին 15 օրյա ժամկետում Կապի միջոցներով չհայտնելու կամ չներկայացնելու դեպքերում (բացառությամբ գործող տվյալների բազաներից ինքնաշխատ եղանակով տվյալների թարմացման դեպքերի).

2) ՇՄՋ հավաստագրման ենթակա գործունեության իրականացման ժամանակ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների ու պայմանների այնպիսի խախտման դեպքում, որոնք՝

ա. անմիջական վտանգ կամ ռիսկ են պարունակում մարդկանց կյանքի կամ առողջության համար.

բ. երկու և ավելի դեպքում պատասխանատու մասնագետի կողմից խախտվել են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական օրենսդրությամբ սահմանված պահանջները.

3) արձանագրված խախտումը պատասխանատու մասնագետի կողմից պատասխանատվության ենթարկվելուց հետո 30 օրվա ընթացքում չվերացնելու դեպքում.

4) պատասխանատու մասնագետի կողմից օրենքով սահմանված վերահսկողություն և հսկողություն իրականացնող անձանց կողմից՝ օրենսդրությանը համապատասխան ստուգումների իրականացմանը խոչընդոտելու կամ պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու դեպքում:

5) մեկ տարվա ընթացքում երրորդ անգամ պատասխանատու մասնագետի կողմից էթիկայի կանոնների խախտման դեպքում:

2. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում ՇՄՋ հավաստագրի գործողությունը կասեցվում է մինչև խախտման պատճառի վերացումը, իսկ 5-րդ կետով նախատեսված դեպքում ՇՄՋ հավաստագրի գործողությունը կասեցվում է վեց ամիս ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերով ՇՄՋ հավաստագրի գործողությունը կասեցվում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի որոշմամբ, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

Հոդված 11.9. ՇՄՋ հավաստագրի գործողության դադարեցումը

1. ՇՄՋ հավաստագրի գործողությունը դադարեցվում է՝

1) հավաստագիր ստանալու համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում.

2) հավաստագրված մասնագետի մահվան դեպքում.

3) մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ սույն օրենքի 11.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի համաձայն հավաստագրի գործողությունը կասեցվելու դեպքում.

4) հավաստագրի գործողության կասեցման ժամկետում կասեցման պահանջների խախտմամբ կասեցված գործունեություն կամ այդ գործունեության առանձին գործառույթ կամ հավաստագրով վերապահված առանձին գործողություն իրականացնելու դեպքում.

5) ՇՄՋ հավաստագրի գործողությունը դադարեցվում է հավաստագրի ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքի առկայության դեպքում ՇՄՋ հավաստագրի գործողության դադարեցման դիմում կարող է ներկայացվել խախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում, իսկ շարունակվող խախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից մեկ տարվա ընթացքում, իսկ սույն հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում՝ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվությունը հայտնաբերելու օրվանից՝ 15 օրվա ժամկետում:

3. Սույն հոդվածի առաջին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված խախտումների հայտնաբերման դեպքում քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը պարտավոր է հավաստագրի գործողության դադարեցման մասին դիմումը դատարան ներկայացնել հավաստագրի գործողության կասեցման օրվանից՝ 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետում դիմում չներկայացվելու դեպքում հավաստագրի գործողության դադարեցման հիմքը համարվում է վերացված:

4. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով հավաստագրի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք ունի նոր ՇՄՋ հավաստագիր ստանալու ՇՄՋ հավաստագրի դադարեցվելուց մեկ տարի հետո:

5. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով հավաստագրի գործողությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, դադարեցվում է դատական կարգով՝ քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի դիմումի համաձայն:

6. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով հավաստագրի գործողությունը համարվում է դադարեցված դատարանի համապատասխան դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

7. Սույն հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով հավաստագրի գործողությունը դադարեցվում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի որոշմամբ:

8. Սույն հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով հավաստագրի գործողությունը համարվում է դադարեցված՝ հավաստագրված մասնագետի մահվան օրվանից:

Հոդված 11.10. Լիցենզավորված անձանց և ՇՄՋ հավաստագրված մասնագետների ռեգիստրը

1. Լիցենզավորված անձանց և ՇՄՋ հավաստագրված մասնագետների ռեգիստրն ստեղծում և վարում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը: Ռեգիստրի հիմնական նպատակը քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց և ՇՄՋ հավաստագրված մասնագետների վերաբերյալ տվյալների հավաքումը, հաշվառումը, պահպանումը, գրանցամատյանի վարումը, մոնիթորինգի և վարկանիշավորման իրականացումը (ուսումնասիրություն, վերլուծություն, կանխատեսում) և օրենքով նախատեսված դեպքերում դրանց փոխանցումն ապահովելն է:

2. Գրանցամատյանի ձևավորման և վարման կարգը, ինչպես նաև այն պետական մարմինների ցանկը, որոնց տրամադրվում է ռեգիստրից օգտվելու հասանելիություն հաստատում է Կառավարությունը:»:

Հոդված 9. Օրենքի 17-րդ հոդվածի 17-րդ մասում «մշակողին» բառը փոխարինել «կազմող լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտին» բառերով:

Հոդված 10. Օրենքի 20-րդ հոդվածի՝

1. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 20. Պետական քաղաքաշինական կադաստրը, քաղաքաշինական գործունեության մոնիթորինգը և լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորումը»:**

2. 7-րդ մասից հետո լրացնել 8-15-րդ մասերով.

«8. Լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորումը քաղաքաշինության գործունեության վերահսկմանն ու բարելավմանն ուղղված տվյալների հավաքագրման, որակի գնահատման, վերլուծության և արդյունքների գրանցման միջոցառումների համախումբ է, որը ենթադրում է որոշակի մեթոդաբանությունների և գործիքների կիրառում:

9. Վարկանիշավորումը դասակարգվում է, ըստ նվազման չորս աստիճանի՝

1) բարձրագույն.

2) բարձր.

3) միջին.

4) ցածր:

10. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորումը իրականացնում է հետևյալ փուլերով՝

1) տվյալների հավաքագրում.

2) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից սահմանած չափորոշիչներին համապատասխան որակի գնահատում.

3) վերլուծություն և արդյունքների գրանցում:

11. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը որակի գնահատման չափորոշիչներին համապատասխան բարձր, միջին և ցածր աստիճանների վարկանիշավորման նպատակով լիցենզավորված գործունեության որակի գնահատումն իրականացնում է լիցենզավորված անձանց և մասնագետների գրանցամատյաներում առկա տեղեկությունների հիման վրա՝ ինքնաշխատ եղանակով:

12. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը որակի գնահատման չափորոշիչներին համապատասխան, բարձր աստիճանի վարկանիշավորում ունեցող քաղաքաշինության գործունեության սուբյեկտներին բարձրագույն աստիճանի վարկանիշավորման նպատակով լիցենզավորված գործունեության որակի գնահատումն իրականացնում է լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի կողմից կամավորության սկզբունքով ներկայացված հայտի հիման վրա:

13. Բարձրագույն աստիճանի վարկանիշավորումը իրականացվում է որակի գնահատման հանձնաժողովի միջոցով:

14. Լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման համար օրենքով կարող են նախատեսվել պետական տուրքեր:

15. Սահմանված մոնիթորինգի իրականացման կարգին համապատասխան քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց և ՇՄՋ հավաստագրված մասնագետների աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման մոնիթորինգի իրականացումը ապահովում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը: »:

Հոդված 11. Օրենքի 21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 21. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորումը, մասնագիտական որակավորման պահանջներ նախատեսող գործունեության տեսակները, ենթատեսակները և դասային աստիճանները**

1. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված կարգով:

2. Քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակները և համապատասխան ենթատեսակները (որոնց համապաստասխան տրվում են ներդիրներ) դասակարգվում են դասային աստիճանների, որոնց գործունեությունը պահանջում է համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետներ:

3. Քաղաքաշինության բնագավառում, ըստ դասային աստիճանների լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտները իրավունք ունեն լիցենզավորված գործունեություն իրականացնել սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված համապատասխան ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական գործունեության օբյեկտներում:

4. Քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակներն են՝

1) քաղաքաշինական փաստաթղթերի կազմումը՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի, որը դասակարգվում է I, II և III դասերի, և ունի հետևյալ ենթատեսակներ.

ա. էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ).

բ. ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարաման և գազամատակարարաման համակարգեր).

գ. հիդրոտեխնիկական (հիդրոտեխնիկական կառուցվածքներ և համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ).

դ. ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա).

ե. տրանսպորտային (տրանսպորտային ուղիներ, ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն).

զ. կապ (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, հաղորդակներ, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ).

2) քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը, որը դասակարգվում է I և II դասերի և ունի հետևյալ ենթատեսակները.

ա. ճարտարապետություն (բացառությամբ պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների վերակառուցման և վերականգնման).

բ. քաղաքաշինություն և տարածական պլանավորում.

գ. պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների վերակառուցում, վերականգնում.

դ. բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ.

ե. էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ).

զ. ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարաման և գազամատակարարաման համակարգեր).

է. հիդրոտեխնիկական (հիդրոտեխնիկական կառուցվածքներ և համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ).

ը. ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա).

թ. տրանսպորտային (տրանսպորտային ուղիներ, ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն).

ժ. կապ (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, հաղորդակներ, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ).

ի. ինժեներաերկրաբանական հետախուզում.

3) Շինարարության իրականացում, որը դասակարգվում է I, II և III դասերի, և ունի հետևյալ ենթատեսակները.

ա. բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ.

բ. էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ).

գ. ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարաման և գազամատակարարաման համակարգեր).

դ. հիդրոտեխնիկական (հիդրոտեխնիկական կառուցվածքներ և համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ).

ե. ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա).

զ. տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն).

է. կապ (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, հաղորդակներ, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ).

4) շինարարության որակի տեխնիկական հսկողությունը, որը դասակարգվում է I և II դասերի և ունի հետևյալ ենթատեսակները.

ա. բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ.

բ. էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ).

գ. ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարաման և գազամատակարարաման համակարգեր).

դ. հիդրոտեխնիկական (հիդրոտեխնիկական կառուցվածքներ և համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ).

ե. ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա).

զ. տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն).

է. կապ (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, հաղորդակներ, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ).

5) քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցումը, որը դասակարգվում է I և II դասերի և ունի հետևյալ ենթատեսակները.

ա. ինժեներաերկրաբանական հետախուզում.

բ. գեոդեզիա.

գ. շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն և անձնագրավորում:

5. Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակների դասակարգումը սահմանվում է, ըստ քաղաքաշինական գործունեության օբյեկտների ռիսկայնության աստիճանների և համապատասխանաբար.

1) I դասի գործունեության տեսակը բնորոշվում է I, II, III, IV և V ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական գործունեության օբյեկտներում աշխատանքների և ծառայությունների մատուցման կարողությամբ,

2) II դասի գործունեության տեսակը բնորոշվում է I, II և III ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական գործունեության օբյեկտներում աշխատանքների և ծառայությունների մատուցման կարողությամբ,

3) III դասի գործունեության տեսակը բնորոշվում է I և II ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական գործունեության օբյեկտներում աշխատանքների և ծառայությունների մատուցման կարողությամբ:»:

Հոդված 12. Օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Քաղաքաշինության բնագավառում շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 13. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ VIII.1-ին գլխով.

«Գ Լ ՈՒ Խ VIII.1

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Հոդված 26.3. Պատասխանատու մասնագետի էթիկայի կանոնները

1. Քաղաքաշինության բնագավառում էթիկայի կանոնները (այսուհետ՝ Էթիկայի կանոններ) պատասխանատու մասնագետի մասնագիտական գործունեության վարքագծի նորմեր են՝ ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ պատասխանատվության, արհեստավարժության, մասնագիտական կատարելագործման, հանրության, գործընկերների և այլոց իրավունքների և օրինական շահերի ճանաչման վերաբերյալ:
2. Էթիկայի կանոնները տարածվում են ինչպես հանրության, գործընկերների և այլոց հարաբերությունների վրա, այնպես էլ պատասխանատու մասնագետի գործունեությամբ պայմանավորված կամ դրանից բխող ցանկացած այլ հարաբերության վրա:
3. Էթիկայի կանոնները չեն սահմանափակում հասարակական կազմակերպությունների անդամ պատասխանատու մասնագետների համար էթիկայի լրացուցիչ կանոնների կամ կանոնակարգերի ընդունումը:

Հոդված 26.4. Էթիկայի հանձնաժողովի ձևավորման կարգը և ներկայացվող պահանջները

1. Պատասխանատու մասնագետի Էթիկայի կանոնների վերաբերյալ հարցերի ուսումնասիրության համար նշանակված քննությունն անցկացնում է պատասխանատու մասնագետների էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ Էթիկայի հանձնաժողով):
2. Էթիկայի կանոնների խախտումները քննելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով ստեղծվում է հասարակական հիմունքներով գործող Էթիկայի հանձնաժողով:
3. Էթիկայի հանձնաժողով ձևավորելու իրավական հիմք առաջանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում քաղաքաշինության բնագավառում լիցենզավորող մարմնը (այսուհետ՝ լիցենզավորող մարմին) պատահականության սկզբունքով ձևավորում է Էթիկայի հանձնաժողով: Պատասխանատու մասնագետի գործատուի ներկայացուցիչը չի կարող ներգրավվել Էթիկայի հանձնաժողովի կազմում:

4. Էթիկայի հանձնաժողովը կազմված է հինգ անդամից: Յուրաքանչյուր դեպքի համար ձևավորվում է պատասխանատու մասնագետի էթիկայի առանձին հանձնաժողով: Նույն անձը չի կարող երկու անգամից ավելի անընդմեջ ընտրվել հանձնաժողովի անդամ:

5. Էթիկայի հանձնաժողովում ընդգրկվում են երկու ներկայացուցիչ՝ քաղաքաշինության բնագավառի մասնագետների գրանցամատյանում գրանցված համապատասխան գործունեության տեսակի հավաստագիր ունեցող մասնագետներից կամ պատասխանատու մասնագետների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպություններից, մեկ քաղաքաշինության բնագավառում գիտական աստիճան ունեցող գիտնական, հոքեբան և մեկ իրավաբան:

6. Էթիկայի հանձնաժողովի նախագահը և քարտուղարը նշանակվում են քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնից:

7. Էթիկայի հանձնաժողովի անդամները պարտավոր են յուրաքանչյուր քննվող գործով ստորագրել շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագիր:

8. Շահերի բախման առկայության մասին հայտարարագիր ներկայացնելու առկայության դեպքում հանձնաժողովի անդամը չի մասնակցում գործի քննությանը:

9. Լիցենզավորող մարմնին շահերի բախման առկայության վերաբերյալ չհայտարարագրված տվյալներ հայտնի դառնալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, Էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են:

10. Էթիկայի հանձնաժողովի անդամների ընտրության կարգը, Էթիկայի հանձնաժողովի անհատական կազմը, Էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը, գործերի քննության կարգը, շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը հաստատում է լիցենզավորող մարմինը:

11. Էթիկայի հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներն ապահովում է լիցենզավորող մարմինը:

12. Էթիկայի հանձնաժողովում քննության են ենթակա պատասխանատու մասնագետի էթիկայի՝ քրեական կամ վարչական պատասխանատվություն չնախատեսող կանոնների խախտումները:

13. Էթիկայի հանձնաժողովը գործի քննությունից հետո ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) քրեական կամ վարչական պատասխանատվություն նախատեսող առերևույթ արարքներ հայտնաբերելու դեպքում կամ մասնագիտական Էթիկայի կանոնների խախտման բացակայության հիմքով՝

ա. մերժել դիմումը.

բ. դադարեցնել գործի քննությունը սեփական նախաձեռնությամբ գործի քննությունն սկսելու դեպքերում

2) օրենքով քրեական կամ վարչական պատասխանատվություն չնախատեսող մասնագիտական Էթիկայի կանոնների խախտման հաստատման դեպքում, մեկ օրյա ժամկետում՝

ա. Լիցենզավորող մարմին ներկայացնել առաջարկություն մեկ տարվա ընթացքում առաջին անգամ խախտում կատարած պատասխանատու մասնագետին նկատողություն տալու վերաբերյալ տեղեկությունը հավաստագրված մասնագետների գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու համար,
բ. մեկ տարվա ընթացքում կրկին պատասխանատու մասնագետի կողմից Էթիկայի կանոնների խախտում արձանագրվելու դեպքում լիցենզավորող մարմին ներկայացնել առաջարկություն պատասխանատու մասնագետին խիստ նկատողություն տալու վերաբերյալ տեղեկությունը հավաստագրված մասնագետների գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու համար,
գ. մեկ տարվա ընթացքում երրորդ անգամ պատասխանատու մասնագետի կողմից Էթիկայի կանոնների խախտման դեպքում լիցենզավորող մարմին ներկայացնել առաջարկություն՝ կասեցնել պատասխանատու մասնագետի հավաստագիրը՝ մեկ ամիս ժամկետով՝ հիմք ընդունելով սույն օրենքի 11.8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը:

14. Էթիկայի հանձնաժողովը ծառայողական քննության արդյունքում ընդունած որոշման մասին մեկ օրվա ընթացքում Կապի միջոցներով տեղեկացնում է ծառայողական քննության կողմերին:

15. Լիցենզավորող մարմինը, ըստ անհրաժեշտության, սույն հոդվածի 13-րդ մասի 2-րդ կետի «ա», «բ» ենթակետերով նախատեսված համապատասխան տեղեկատվությունը փոխանցում է իրավասու մարմիններին՝ համապատասխան պատասխանատու մասնագետին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով:

16. Լիցենզավորող մարմինը սահմանած կարգով վարում է մասնագիտական էթիկայի խախտում կատարած անձանց գրանցամատյանը:»:

Հոդված 14. Օրենքի 27-րդ հոդվածում «դատական կարգով» բառերից առաջ լրացնել «վարչական կամ» բառերով:

Հոդված 15. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից տասներկու ամիս հետո:

Հոդված 16. Սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից

1. տասներկու ամսվա ընթացքում Կառավարությունը հաստատում է՝

1) հավաստագրման և թեստավորման, վերաորակավորման իրականացման կարգը, հավաստագրերի ձևերը.

2) լիցենզավորված անձանց և հավաստագրված մասնագետների ռեգիստրի ձևավորման, տվյալների փոփոխության, լրացման, գրանցամատյանի վարման կարգը, գրանցամատյանից օգտվելու հասանելիություն ունեցող պետական մարմինների ցանկը,

լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման և մոնիթորինգի իրականացման կարգը.

3) քաղաքաշինության բնագավառում լիցենզիա և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և ծառայությունների, ինչպես նաև ըստ ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) քաղաքաշինական գործունեության օբյեկտների դասակարգման ցանկերը և մեթոդաբանությունը.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունք ունեցող մասնագետների ՇՄԶ կազմակերպման և հավաստագրման հնգամյա ժամանակացույցը:

2. քսանչորս ամսվա ընթացքում Կառավարությունը հաստատում է՝

1) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների նախաձեռնությամբ կամ հրավերով օտարերկրյա կազմակերպությունների և մասնագետների մասնագիտական կարճաժամկետ գործունեության թույլտվության տրամադրման կարգը.

2) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ հաստատում է պատասխանատու մասնագետի էթիկայի կանոնները:

3. տասներկու ամսվա ընթացքում քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը հաստատում է՝

1) Օրենքի 21-րդ հոդվածով սահմանված մասնագիտական գործունեության տեսակներին և ենթատեսակներին համապատասխան պահանջվող մասնագիտական որակավորումների ցանկը.
2) ՇՄԶ ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը և մասնակցությանը ներկայացվող պահանջները, յուրաքանչյուր մասնագիտության գծով շնորհվող կրեդիտների տեսակները, քանակը և դրանց շնորհման չափորոշիչները.
3) լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվության և մասնագետների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը.

4. քսանչորս ամսվա ընթացքում քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը հաստատում է՝

1) թեստավորման հարցաշարերը, հայտարարության տեքստին ներկայացվող պահանջները.

2) հաստատում է Օրենքի 21-րդ հոդվածով սահմանված քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան քաղաքաշինական գործունեության օբյեկտներում աշխատանքների և ծառայությունների իրականացման գործելակարգերը և պատասխանատու մասնագետների մասնագիտական բնութագրերը.

3) հաստատում է էթիկայի և որակի գնահատման հանձնաժողովների անհատական կազմը, աշխատակարգը, անդամների ընտրության և գործերի քննության կարգերը, շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը.

4) սահմանում է լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների կողմից աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման որակի գնահատման չափորոշիչները:

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում

Կ-362[2]-23.08.2022-ՏՀ-011

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«~~Քաղաքաշինական~~Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինության գործունեության օբյեկտներն, ելնելով դրանց# ծավալից, նշանակությունից, կարևորությունից ու բարդությունից, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունից, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հինգ աստիճանների (կատեգորիայի):»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում՝

3. «իրավաբանական անձինք,» բառերից հետո լրացնել «անհատ ձեռնարկատերերը,» բառերը.

4. «(կառուցապատողներ, քաղաքաշինական փաստաթղթեր մշակողներ, ~~կազմողներ,~~ շինարարություն իրականացնողներ, քաղաքաշինական գործունեության վերահսկողություն իրականացնողներ և այլն)» բառերը փոխարինել «(կառուցապատողներ, քաղաքաշինական փաստաթղթեր կազմողներ, քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն իրականացնողներ, շինարարություն իրականացնողներ, շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնողներ, քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայություններ մատուցողներ, քաղաքաշինական գործունեության վերահսկողություն իրականացնողներ և ~~այլն~~պատասխանատու մասնագետներ)» բառերով:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի՝

5. 3-րդ մասի «ա» կետում, 5-րդ և 6-րդ մասերում «մշակողներին», «մշակողը» և «մշակողի» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով փոխարինել «կազմող» բառով.

4-րդ ~~մասում՝~~

~~5.~~6. մասի «ը» ~~կետի~~կետում «այլ բան նախատեսված չէ» բառերը փոխարինել «ամրագրված է նման պահանջ» բառերով.

~~6.~~7. 4-րդ մասի «թ» ~~կետը~~կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

~~7.~~8. ~~«թ)~~«թ) օրենքով սահմանված կարգով ապահովել շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝ ~~բացառությամբ~~ սույն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ ~~մասով~~մասի 3-րդ կետով սահմանված աշխատանքների~~:»:~~ նկատմամբ:».

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1 - րդ հոդվածով.

« **Հոդված 7.1. Քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան քաղաքաշինության գործունեության սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները**

2. Քաղաքաշինական փաստաթղթեր կազմող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքները և պարտականությունները.

1) քաղաքաշինական փաստաթղթեր կազմող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն են՝

ա. պետական, տեղական ինքնակառավարման և այլ մարմիններից ձեռք բերել նախագծման համար անհրաժեշտ ելակետային տվյալներ, օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում և այլն) նախագծման տեխնիկական պայմաններ և#կառուցապատողի կողմից տեխնիկական բնութագրում նշված լրացուցիչ պայմանների (առկայության դեպքում) կատարման համար անհրաժեշտ ելակետային նյութեր.

բ. նախագծային փաստաթղթերի կազմում ընդգրկել լրացուցիչ նյութեր.

գ. մասնակցել օրենքով նախատեսված նախագծի համաձայնեցման փուլերին.

~~դ. իրականացնել շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն՝ օրենքով սահմանված համապատասխան շինարարության որակի տեխնիկական հսկողության լիցենզիա ունենալու և քաղաքաշինական փաստաթղթերի կազման աշխատանքների կապալի պայմանագրով նման պարտավորություն ստանձնելու դեպքում.~~

2) քաղաքաշինական փաստաթղթեր կազմող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի պարտականություններն են՝

ա. կատարել օրենսդրության և քաղաքաշինական փաստաթղթերի նախագծման թույլտվության պահանջները.

բ. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքով և իրավական այլ ակտերով ապահովել քաղաքաշինական փաստաթղթեր մշակող պատասխանատու մասնագետների հեղինակային իրավունքները՝ աշխատանքային պայմանագրով նման պահանջի առկայության դեպքում:

2. Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքները և պարտականությունները.

1) փորձաքնություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն են՝

ա. Քաղաքաշինական փաստաթղթերի և մեթոդաբանության վերաբերյալ ~~մասնագիտական~~փորձագիտական եզրակացության տրամադրելը.

բ. քաղաքաշինական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն նախապատրաստելու համար կառուցապատողից, ինչպես նաև նախագիծը կազմող աշխատանքների պատասխանատու կապալառուից պահանջել ներկայացված ճարտարապետաշինարարական լուծումները հիմնավորող օրենքով սահմանված փաստաթղթեր.

գ. նյութերի լրակազմված չլինելու դեպքում դրանք վերադարձնել պատվիրատուին՝ անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու առաջարկով.

2) փորձաքնություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի պարտականություններն են՝

ա. փորձաքննության ընթացքում քաղաքաշինական գործունեության օբյեկտի ուսումնասիրությանը, վերլուծությանը և գնահատմանը փորձագետների մասնակցությունն ապահովելը.

բ. քաղաքաշինական փաստաթղթերով նախատեսված նախագծային լուծումների համապատասխանության հավաստումը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

գ. հրաժարվել իրենց կողմից կազմված նախագծերի փորձաքննությունն իրականացնելուց.

3) փորձաքնություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտը կարող է ունենալ նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

3. Շինարարություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքները և պարտականությունները.

1) շինարարություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն են՝

ա. հրաժարվել կառուցապատողի տրամադրած շինանյութերը, շինվածքները, կոնստրուկցիաները և ինժեներական սարքավորումներն օգտագործելուց, եթե դրանք չեն համապատասխանում գործող ստանդարտներին կամ նորմատիվ պահանջներին.

բ. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերում նորմատիվ բնույթի խախտումներ հայտնաբերելիս դադարեցնել շինարարական աշխատանքները և պահանջել նախագծային փաստաթղթերի այլընտրանքային փորձաքննություն

2) շինարարություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի պարտականություններն են՝

ա) շինարարության ընթացքում ապահովել հաստատված նախագծի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները.

բ) սեփական միջոցներով վերացնել պայմանագրով նախատեսված ժամկետում (բայց ոչ ուշ, քան շինարարության ավարտական ակտը ձևակերպելու օրվանից մեկ տարվա ընթացքում) հայտնաբերված թերությունները, եթե դրանք առաջացել են շինարարության ընթացքում իրենց թույլ տված խախտումների հետևանքով.

4. շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն ու պարտականությունները.

1) շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն են՝

ա. շինարարության իրականացման պատասխանատու մասնագետներին տալ ցուցումներ և հրահանգներ պետական ստանդարտներին, տեխնիկական պայմաններին և այլ նորմատիվային փաստաթղթերին, ինչպես նաև ճարտարապետաշինարարական նախագծին չհամապատասխանող նյութերի, շինվածքների կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների օգտագործումը բացառելու մասին.

բ. հրաժարվել շինարարության որակի տեխնիկական հսկողությունից, եթե կառուցապատողի և (կամ) շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպության կողմից ինքնակամ իրականացված գործողությունների արդյունքում գրանցվել է նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների կամ ճարտարապետաշինարարական նախագծային լուծումների այնպիսի շեղումներ, որոնք կարող են նվազեցնել քաղաքաշինական գործունեության օբյեկտի կրողունակությունը, կայունությունը և ազդել հուսալիության վրա.

գ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել տեխնիկական հսկողության իրականացման հետ կապված պաշտոնատար անձանց գործողությունները.

դ. ~~շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտը~~ շինարարական աշխատանքների բոլոր փուլերում անհրաժեշտ տեխնիկական հետազոտություններ կամ փորձարկումներ կատարելու միջոցով ~~ստուգում~~կարող է ստուգել շինարարական աշխատանքների համապատասխանությունը ճարտարապետաշինարարական նախագծերին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներին.

2) շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի պարտականություններն են՝

ա. շինարարության բոլոր փուլերում ստուգել շինարարական աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը ճարտարապետաշինարարական նախագծով տրված լուծումներին և պահանջներին.

բ. շինարարության բոլոր փուլերում ստուգել շինարարական աշխատանքների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված պահանջներին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին և ստուգման արդյունքներն արձանագրել կատարողական փաստաթղթերում.

գ. քաղաքաշինական գործունեության օբյեկտի կրողունակությանը, կայունությանը և հուսալիությանը սպառնացող թերությունների հայտնաբերման կամ իր կողմից տրված ցուցումները ողջամիտ ժամկետում չկատարելու կամ տեխնիկական վթարների առաջացման դեպքում դադարեցնել շինարարությունը և այդ մասին 48 ժամվա ընթացքում նշված կամ էլեկտրոնային գրանցամատյաններում առկա հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելով կամ էլեկտրոնային համակարգի միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով (այսուհետ՝ Կապի միջոցներ) իրազեկել կառուցապատողին և քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին.

դ. պահպանել շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման կարգով սահմանված պահանջները.

ե. անավարտ աշխատանքների և թերությունների հայտնաբերման դեպքում օբյեկտի շինարարական կապալառու կազմակերպության հետ կազմել դրանց ցանկը, սահմանել դրանց վերացման ժամկետները.

զ. տեղեկացնել կառուցապատողին հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերի, տեխնիկական պայմանների, շինարարական նորմերի և կանոնների խախտումներով կամ անորակ նյութերով, շինվածքներով կամ կոնստրուկցիաներով կատարված շինարարական աշխատանքների մասին.

է. հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ շինարարություն իրականացնող քաղաքաշինական գործունեության սուբյեկտին տալ պարտադիր կատարման ենթակա ցուցումներ և հրահանգներ.

ը. մասնակցել շինարարական կազմակերպությունների կողմից դադարեցված քաղաքաշինական գործունեության օբյեկտների, դրանց առանձին մասերի, կոնստրուկցիաների և հանգույցների միջանկյալ ընդունմանը՝ դադարեցումից ոչ ուշ քան 3 ամսվա ընթացքում, ինչպես նաև ձևակերպված համապատասխան ակտով նրանց հանձնելուն՝ նշելով այդ օբյեկտների փաստացի վիճակը.

3) քաղաքաշինական գործունեության օբյեկտի շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացումը տվյալ շինարարությունն իրականացնող կապալառու կազմակերպության կողմից արգելվում է.

4) շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող սուբյեկտը պետք է ունենա օրենքով սահմանված համապատասխան քաղաքաշինական գործունեության իրավունք:

5. Քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայություններ մատուցող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն ու պարտականությունները.

1) քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայություններ մատուցող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի իրավունքներն են՝

ա. շենքերի և շինությունների առկա նախագծային փաստաթղթերի և շահագործման պայմանների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերում,

բ. իրականացնել շենքերի և շինությունների անձնագրավորում.

գ.# իրականացնել ինժեներաերկրաբանական հետախուզում, ինժեներապաշտպան միջոցառումներ և դրանց արդյունքում կազմել նյութեր.

դ. իրականացնել գեոդեզիական ծառայություններ.

2) քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայություններ մատուցող քաղաքաշինության գործունեության սուբյեկտի պարտականություններն են՝

ա. հետազննման արդյունքներով, վնասված տարրերի ուժեղացման կամ փոխարինման և վնասվածքների առաջացման պատճառների վերացման վերաբերյալ տալ առաջարկություններ:

բ.# ընտրել հետախուզման և հետազննման համար բավարար մեթոդներ և տալ խնդիրների լուծման վերջնական առաջարկություններ.

գ. կոնստրուկցիաների նյութերի ամրության և այլ բնութագրերի որոշման ժամանակ առավելություն տալ հսկողության չքայքայող մեթոդներին (մասնավորապես բետոնի ամրությունը որոշել մեխանիկական գործողության սարքերով).

դ. իրականացնել շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն՝ ~~հ~~Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

6. Սույն հոդվածում նշված I դասի քաղաքաշինական գործունեություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտները պարտավոր են ունենալ պաշտոնական ինտերնետային կայք, որն առնվազն պետք է պարունակի տեղեկատվություն ծառայությունների, մասնագետների վերաբերյալ, ինչպես նաև ապահովի հետադարձ կապի հնարավորություն:

7. Քաղաքաշինության գործունեության սուբյեկտները պարտավոր են՝

1) քաղաքաշինական գործունեության օբյեկտների վերաբերյալ պահպանել օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունները.

2) ապահովել քաղաքաշինական գործունեության օբյեկտներում քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան գործելակարգով սահմանված աշխատանքների և ծառայությունների կատարումը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել վիճակագրական և այլ տեղեկություններ.

4) իրականացնել Օրենքով սահմանված այլ պարտականություններ:»:

Հոդված 5. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 8-րդ 9-րդ հոդվածները:

Հոդված 6. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ[1]-զ[5]» կետերով՝.

«զ[1]) հաստատում է հավաստագրման, վերաորակավորման և թեստավորման կարգը, հավաստագրերի ձևերը, լիցենզավորված անձանց և հավաստագրված մասնագետների ռեգիստրի ձևավորման, տվյալների փոփոխության, լրացման, գրանցամատյանի ~~(այսուհետ՝ գրանցամատյան)~~ վարման կարգը, գրանցամատյանից օգտվելու հասանելիություն ունեցող պետական մարմինների ցանկը, լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման և մոնիթորինգի իրականացման կարգը.

զ[2]) հաստատում է քաղաքաշինության բնագավառում լիցենզիա և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և ~~խորհրդատվական~~ ծառայությունների, ինչպես նաև ըստ ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) քաղաքաշինական գործունեության օբյեկտների դասակարգման ~~և քաղաքաշինության բնագավառում լիցենզիա չպահանջող քաղաքաշինական աշխատանքների և ծառայությունների~~ ցանկերը և մեթոդաբանությունը.

զ[3]) հաստատում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունք ունեցող մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման (այսուհետ նաև ՇՄԶ) կազմակերպման և հավաստագրման հնգամյա ժամանակացույցը.

զ[4]) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների նախաձեռնությամբ կամ հրավերով օտարերկրյա մասնագետների և կազմակերպությունների կարճաժամկետ քաղաքաշինության գործունեության թույլտվության տրամադրման կարգը.

զ[5]) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ հաստատում է պատասխանատու մասնագետի էթիկայի կանոնները.»:

Հոդված 7. Օրենքի 10.1-ին~~րդ~~ հոդվածի՝

1. 3-րդ մասի 21-րդ կետում «բարձր և բարձրագույն» բառերը փոխարինել «IV և V» բառերով.

2. 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 27-35 կետերով՝

«27) հաստատում է սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված մասնագիտական գործունեության տեսակներին և ենթատեսակներին համապատասխան պահանջվող մասնագիտական որակավորումների ցանկը.

28) հաստատում է սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան քաղաքաշինական գործունեության օբյեկտներում իրականացվող աշխատանքների, և ծառայությունների մատուցման գործելակարգերը և պատասխանատու մասնագետների մասնագիտական բնութագրերը.

29) հաստատում է ~~մասնագիտական~~որակավորման, էթիկայի և որակի գնահատման հանձնաժողովների անհատական կազմը, աշխատակարգը, անդամների ընտրության և գործերի քննության կարգերը, շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը.

30) հաստատում է լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվության և մասնագետների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը, թեստավորման հարցաշարերը, հայտարարության տեքստին ներկայացվող պահանջները.

31) հաստատում է ՇՄՋ ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը և մասնակցությանը ներկայացվող պահանջները, յուրաքանչյուր մասնագիտության գծով շնորհվող ՇՄՋ կրեդիտների տեսակները, քանակը և դրանց շնորհման չափորոշիչները.

32) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինության բնագավառում հավաստագրված մասնագետների գրանցումը.

33) օրենքով սահմանված դեպքերում իրականացնում է մասնագետների հավաստագրումը և հաստատում մասնագետներին տրվող հավաստագրերը.

34) իրականացնում է I, II և III կարգերի մասնագետների և I, II և III դասերի գործունեություն իրականացնող լիցենզավորված կազմակերպությունների գրանցամատյանների վարումը, որտեղ առնվազն ներառվում է մասնագետների անհատական տվյալների (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի), կրթության, որակավորման, վերաորակավորման, մասնագիտացման, մասնագիտական գործունեության և ՇՄՋ հավաստագրերի, լիցենզավորված անձի տվյալներ (անվանումը և գտնվելու վայրը, ազգանունը, անունը, բնակության վայրը և հաշվառման հասցեն), լիցենզիայի գործունեության տեսակի, գործողության ժամկետի, գործողության ժամկետների երկարաձգումների, լիցենզիայի, ներդիրի կամ հավաստագրերի վերաձևակերպման, գործողության կասեցման, գործողության դադարեցման և վարկանիշավորման վերաբերյալ տեղեկություններ, օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ տեղեկություններ.

35) սահմանում է լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների կողմից աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման որակի գնահատման չափորոշիչներ:».~~:~~

3. 3-րդ մասի 26-րդ կետի «:» նշանը փոխարինել «.» նշանով:

Հոդված 8. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ V.1-ին գլխով.

«Գ Լ ՈՒ Խ Ⅴ.1

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդված 11.1. Շարունակական մասնագիտական զարգացման հասկացությունը և քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեությանը ներկայացվող հիմնական~~ընդհանուր~~ պահանջները

4. ~~Շարունակական մասնագիտական զարգացումը(ՇՄԶ)~~ՇՄԶ՝ քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց մասնագիտական կարողությունների, ունակությունների և հմտությունների զարգացման անընդհատությունն ապահովող գործընթաց է:

5. Քաղաքաշինության բնագավառում հավաստագրված մասնագետները մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող ֆիզիկական անձիք են~~ (այսուհետ Հավաստագրված մասնագետ),~~, որոնք~~,~~ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել են մասնագիտական գործունեության ՇՄԶ համապատասխան հավաստագիր և գրանցվել են քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից վարվող մասնագետների ~~ռեեստրում:~~գրանցամատյանում (այսուհետ Հավաստագրված մասնագետ):

6. Մասնագետներն իրենց աշխատանքային փորձի, կատարված աշխատանքների ծավալի և բարդության դասակարգվում են I, II և III կարգի.

4) I կարգի մասնագետը կարող է քաղաքաշինական գործունեություն իրականացնել I, II, III, IV և V ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) քաղաքաշինական գործունեության օբյեկտներում և հանդես գալ, որպես I, II և III դասի քաղաքաշինական գործունեության տեսակների պատասխանատու մասնագետ.

5) II կարգի մասնագետը կարող է քաղաքաշինական գործունեություն իրականացնել I, II, III, ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) քաղաքաշինական գործունեության օբյեկտներում և հանդես գալ, որպես II և III դասի քաղաքաշինական գործունեության տեսակների պատասխանատու մասնագետ.

6) III կարգի մասնագետը կարող է քաղաքաշինական գործունեություն իրականացնել I և II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) քաղաքաշինական գործունեության օբյեկտներում և հանդես գալ, որպես III դասի քաղաքաշինական գործունեության տեսակների պատասխանատու մասնագետ:

4. Քաղաքաշինության բնագավառի մասնագիտական գործունեության տեսակներին համապատասխան մասնագիտական որակավորումների պահանջները հաստատվում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի իրավական ակտով:

5. Այլ պետություններում քաղաքաշինության բնագավառի մասնագիտական կրթություն ստացած անձինք (ներառյալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիները) Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինության բնագավառում պատասխանատու մասնագետի գործունեություն կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա մասնագիտական կրթության փաստը հավաստող փաստաթղթերի փոխադարձ ճանաչման կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ՇՄՋ հավաստագրերի առկայության դեպքում:

6. III կարգի մասնագետի հավաստագիր կարող է ստանալ համապատասխան մագիստրոսի կրթական աստիճան ստացած, 90 տոկոս և ավելի միջին որակավորման գնահատական (ՄՈԳ) ունեցող անձը՝ օրենքով սահմանված պետական տուրքը վճարելու և հավաստագրման հայտը ոչ ուշ, քան համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունը ավարտելուց հետո երկու տարվա ընթացքում ներկայացնելու դեպքում, հակառակ դեպքում՝ հավաստագրումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով:

7. Վերջին հինգ տարում առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեություն իրականացրած III կարգի հավաստագիր ունեցող մասնագետը կարող է հաջորդ հնգամյա փուլում հավաստագրվել որպես III կարգի մասնագետ՝ առանց ՇՄՋ կրեդիտների նվազագույն քանակի շեմը լրացնելու:

8. Վերջին հինգ տարում առնվազն երեք տարի մասնագիտական գործունեություն իրականացրած և ՇՄՋ կրեդիտների նվազագույն քանակի առնվազն 75 տոկոսը հաղթահարած համապատասխան ոլորտի մասնագետը մասնագիտական գործունեությունը շարունակելու և ՇՄՋ հավաստագիր ստանալու համար կարող է անցնել ստացված տեսական գիտելիքների և գործնական հմտությունների գնահատման գործընթաց (այսուհետ թեստավորում) և ստանալ ՇՄՋ հավաստագիր:

9. Վերջին հինգ տարում ՇՄՋ կրեդիտների նվազագույն քանակի 75 տոկոսի շեմը չհաղթահարած համապատասխան ոլորտի մասնագետի գործունեությունը ժամանակավոր կասեցվում է մինչև նոր ՇՄՋ հավաստագրի ստացումը (բացառությամբ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ կետերով սահմանված դեպքերի):

10. ~~Բազային~~Քաղաքաշինության բնագավառում բազային մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցող ֆիզիկական անձը, օրենքով սահմանված կարգով կարող է մասնակցել վերաորակավորման կրթական ծրագրերով անցկացվող դասընթացներին և գիտելիքների ստուգումը բարեհաջող անցնելուց հետո ձեռք բերել սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված քաղաքաշինության գործունեության տեսակին և ենթատեսակին համապատասխան ~~կրթության այլ որակավորման աստիճան~~ՇՄՋ հավաստագիր:

11. Վերաորակավորման համար ~~անհրաժեշտ~~ ԲՈՒՀ-ի ~~կրթական~~ակադեմիական կրեդիտների նվազագույն քանակը յուրաքանչյուր ~~մասնագիտության~~վերաորակավորման մասնագիտական կրթական ծրագրի համար սահմանվում է՝ առնվազն 45 ~~կրթական~~ակադեմիական կրեդիտ ~~(ECTS~~ (ԿԿՓԵՀ):

12. Վերաորակավորված մասնագետին ՇՄԶ հավաստագիր չի տրվում, եթե մասնագետը չի ապահովել սույն հոդվածի 6-8-րդ կամ Օրենքի 11.4-րդ հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված պահանջները:

Հոդված 11.2 Քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակների պատասխանատու մասնագետների ՇՄԶ ապահովող միջոցառումների պլանավորումը

2. Քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակներին համապատասխան պատասխանատու մասնագետների ՇՄԶ ապահովող միջոցառումների պլանավորումն իրականացնում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը:

Հոդված 11.3. ՇՄԶ կազմակերպման գործընթացը

1. ՇՄԶ-ն իրականացվում է այդ գործընթացի անընդհատության և բազմաձևության սկզբունքների համակցմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ՇՄԶ գործընթացի անընդհատությունն ապահովվում է յուրաքանչյուր հնգամյա շրջափուլով՝ այդ տարիների ընթացքում իրականացված մասնագիտական գործունեության, ինչպես նաև ձեռք բերված գիտելիքների և մասնագիտական հմտությունների գնահատման հիման վրա: ՇՄԶ-ի, ինչպես նաև ձեռք բերված գիտելիքների և մասնագիտական հմտությունների համար շնորհվում են ՇՄԶ կրեդիտներ:

3. ՇՄԶ բազմաձևությունն ապահովելու համար սահմանվում են հետևյալ գործունեության զարգացման տեսակները.

1) տեսական գիտելիքների զարգացում՝ Հայաստանի Հանրապետությունում կամ այլ պետություններում մասնագիտական դասընթացներին, սեմինարներին, սիմպոզիումներին, գիտական, գիտագործնական գիտաժողովներին և համագումարներին մասնակցության և (կամ) իրականացման միջոցով.

2) գործնական հմտությունների զարգացում՝ աշխատանքային տեղում մասնագիտական կատարելագործման, գիտագործնական միջոցառումներին մասնակցության և (կամ) իրականացման միջոցով.

3) ինքնակրթություն և ինքնազարգացում՝ հեռավար դասընթացների մասնակցության և (կամ) իրականացման կամ գիտական աշխատանքների, աշխատությունների հրատարակման և (կամ) գործնական ուսումնասիրությունների արդյունքների ներկայացման միջոցով:

4. Հավաստագրման համար անհրաժեշտ ՇՄԶ կրեդիտների նվազագույն քանակը յուրաքանչյուր հնգամյա փուլի համար սահմանվում է՝

1) I կարգի մասնագետների համար ՝ առնվազն 240 ՇՄԶ կրեդիտ.

2) II կարգի մասնագետների համար՝ առնվազն 160 ՇՄԶ կրեդիտ.

3) III կարգի մասնագետների համար՝ առնվազն 100 ՇՄԶ կրեդիտ.

5. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ՇՄԶ գործունեության զարգացման տեսակները քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի սահմանած կարգով կարող են իրականացնել տեղական, օտարերկրյա և (կամ) միջազգային հետևյալ կազմակերպությունները.

1) օրենքով սահմանված կարգով քաղաքաշինական կրթական ծրագրեր իրականացնող կրթական հաստատությունները.

2) քաղաքաշինական մասնագիտական հասարակական և ինքնակարգավորվող կազմակերպությունները.

3) շինարարական կամ նախագծային կազմակերպությունները.

4) քաղաքաշինական գործունեություն ծավալող այլ կազմակերպություններ:

Հոդված 11.4 ՇՄԶ հավաստագիրը և ՇՄԶ արդյունքների հավաստագրումը

8. Շարունակական մասնագիտական զարգացման հավաստագիրը ՝ քաղաքաշինության բնագավառում պատասխանատու մասնագետի մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունքը հավաստող փաստաթուղթ է, որը տրվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ ՇՄԶ կրեդիտներ հավաքելու և սույն հոդվածով սահմանված ժամկետներում մասնագիտական գործունեություն իրականացնելու դեպքում

9. ՇՄԶ գնահատումն իրականացվում է հավաստագրման միջոցով:

10. ՇՄԶ հավաստագիրը տրվում է հինգ տարի ժամկետով: ՇՄԶ հավաստագրի ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ մասնագետը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմին հաջորդ հինգ տարիների համար՝ ՇՄԶ հավաստագիր ստանալու նպատակով:

11. ՇՄԶ հավաստագիրը տրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների բավարարման և «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրք վճարելու դեպքում:

12. ՇՄԶ հավաստագիրը (բացառությամբ Օրենքի 11.1-րդ հոդվածի 6-8-րդ մասերով սահմանված դեպքերի) տրվում է, եթե մասնագետը.

5) ըստ վերապատրաստման մակարդակի լրացրել է սույն օրենքով սահմանված ՇՄՋ կրեդիտների նվազագույն քանակը.

6) սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված քաղաքաշինության բնագավառում իրականացվող գործունեության տեսակին և ենթատեսակին համապատասխան ունի Հայաստանի Հանրապետությունում համապատասխան բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան են ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որոնց ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով.

7) սույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված քաղաքաշինության գործունեության տեսակին և ենթատեսակին համապատասխան բակալավրի որակավորման աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում վերջին հինգ տարում ունի առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, իսկ համապատասխան մագիստրոսի որակավորման աստիճան ունենալու կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն համապատասխան կրթության որակավորման աստիճան ունենալու կամ օտարերկրյա պետությունում համապատասխան աստիճան ձեռք բերած լինելու դեպքում վերջին հինգ տարում ունի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն.

8) տիրապետում է հայերենին:

13. ՇՄՋ հավաստագիր չի տրվում, եթե մասնագետը չի ապահովել սույն հոդվածի 3-5-րդ կամ Օրենքի 11.1-րդ հոդվածի 6-8-րդ մասերով սահմանված պահանջները:

14. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը Հավաստագրման և թեստավորման վերաբերյալ որոշումներն ընդունում է սույն օրենքի 11 3-րդ հոդվածով սահմանված ՇՄՋ ապահովող միջոցառում իրականացնող կազմակերպությունում կամ կրթական հաստատությունում գործող սույն օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 29-րդ կետով սահմանված համապատասխան ~~մասնագիտական~~որակավորման հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա: Սակայն քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինն իրավունք ունի որոշման համար հիմք չընդունել հանձնաժողովի եզրակացությունը: Այս դեպքում նա պարտավոր է իր որոշմամբ հիմնավորել հանձնաժողովի եզրակացությունը չընդունելու պատճառները:

Հոդված 11.5. Քաղաքաշինության բնագավառի պատասխանատու մասնագետի հասկացությունը, իրավունքները և պարտականությունները

1. Պատասխանատու մասնագետ է հանդիսանում լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտին տրամադրված լիցենզիային կից համապատասխան ներդիրներում ընդգրված անձը, ով ունի ՇՄՋ հավաստագիր և գրանցված է մասնագետների ~~ռեեստրում~~գրանցամատյանում:

2. Պատասխանատու մասնագետի իրավունքներն են՝

1) օրենքով սահմանված կարգով իրենց կրթությանը, որակավորմանը և մասնագիտացմանը համապատասխան իրականացնել լիցենզավորման ենթակա և (կամ) շինարարության թույլտվություն չպահանջվող քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեություն.

2) ներկայացնել ապացուցողական հիմնավորումներ, որոնք նախատեսված չեն քաղաքաշինական փաստաթղթերով.

3) քաղաքաշինական գործունեության օբյեկտին և մեթոդաբանությանը վերաբերող հարցերի վերաբերյալ մասնագիտական կարծիքի ազատ արտահայտումը.

4) օրենքով սահմանված կարգով մասնակցել սույն օրենքի 11.3-րդ հոդվածով սահմանված ՇՄՋ գործունեության զարգացման տեսակներին.

~~5) օրենքով սահմանված կարգով պաշտպանել իր գործարար համբավը, պատիվը և արժանապատվությունը.~~

~~6) օրենքով սահմանված կարգով ստեղծել միավորումներ կամ անդամակցել դրանց.~~

~~7~~5) դիմել սույն օրենքով նախատեսված էթիկայի հանձնաժողով՝ իր կարծիքով այլ պատասխանատու մասնագետի կողմից մասնագիտական էթիկայի կանոնների խախտման դեպքերում

~~8~~6) օգտվել օրենքով սահմանված այլ իրավունքներից:

3. Պատասխանատու մասնագետի պարտականություններն են՝

1) քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնելիս առաջնորդվել քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված պարտադիր պահանջներով.

2) պահպանել օրենսդրության պահանջները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակել, լրացնել, վարել և շրջանառել քաղաքաշինական փաստաթղթերը և անձնական ստորագրությամբ վավերացնել դրանք.

4) Օրենքով սահմանված դեպքերում քաղաքաշինական գործունեության օբյեկտների վերաբերյալ պահպանել գաղտնիք պարունակող տեղեկությունները.

5) կատարելագործել իր մասնագիտական գիտելիքները և հմտությունները, մասնագիտական որակավորման պահանջներին համապատասխան մասնակցել ՇՄՋ գործընթացին.

6) իր մասնագիտական գործունեությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառում պետական կառավարման մարմնի կողմից հաստատված մասնագիտական բնութագրին համապատասխան.

7) հավաստագրված մասնագետների գրանցամատյաններում ամրագրված իր տվյալների փոփոխությունների մասին 15 օրյա ժամկետում հայտնել քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնին (բացառությամբ գործող տվյալների բազաներից ինքնաշխատ եղանակով տվյալների թարմացման դեպքերի).

8) պահպանել պատասխանատու մասնագետի էթիկայի կանոնները

9) կատարել օրենքով սահմանված այլ պարտավորություններ:

4. Պատասխանատու մասնագետները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Հոդված 11.6. ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցումը

1. ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցումը որոշակի ժամկետով կամ որոշակի պայմաններով պատասխանատու մասնագետին ՇՄՋ հավաստագրման ենթակա մասնագիտական գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկումն է:

2. ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցման ընթացքում պատասխանատու մասնագետին արգելվում է կասեցման որոշմամբ սահմանված քաղաքաշինական գործունեության օբյեկտում և ժամանակահատվածում իրականացնել աշխատանքների և ծառայությունների իրականացման գործելակարգերով սահմանված գործունեություն, գործառույթ կամ գործողություն, բացառությամբ նրանց, որոնք ուղղված են կասեցման մասին որոշմամբ նախատեսված անհետաձգելի միջոցառումներն իրականացնելուն:

3. ՇՄՋ հավաստագրի գործողությունը կասեցնելու որոշմամբ պետք է հստակ սահմանվեն կասեցվող գործողությունը, գործառույթը կամ գործողությունները, ինչպես նաև կասեցման պատճառները, իրավական հիմքերը և ժամկետները: Եթե, խախտման բնույթից ելնելով, դրանք կամ դրանց հետևանքները հնարավոր է վերացնել պատասխանատու մասնագետին հավաստագրման ենթակա գործունեության առանձին գործառույթները կամ հավաստագրով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկելու միջոցով, ապա այդ դեպքերում պատասխանատու մասնագետի ողջ գործողության կասեցում չի կիրառվում:

4. Սույն մասի 1-ին պարբերությունով սահմանված հավաստագրի գործողությունը կասեցնելու մասին որոշման բովանդակությանը ներկայացված դրույթներ չպարունակող ՇՄՋ հավաստագրի գործողությունը կասեցնելու մասին որոշումներն անվավեր են:

5. Եթե առկա են ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցման մեկից ավելի հիմքեր, ապա կասեցման որոշում կայացվում է յուրաքանչյուր հիմքով առանձին:

6. ՇՄՋ հավաստագրի գործողությունը կասեցված է համարվում այդ մասին քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի որոշումը պատասխանատու մասնագետին Կապի միջոցներով տեղեկացնելու օրվան հաջորդող օրվանից, եթե ՇՄՋ հավաստագրի գործողությունը կասեցնելու մասին որոշմամբ կամ օրենքով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:

7. ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցումը վերացված է համարվում կասեցման ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից: Եթե ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցման ժամկետը սահմանվել է մինչև խախտման պատճառի վերացումը, ապա ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցումը վերացված է համարվում պատասխանատու

մասնագետի՝ խախտումները վերացնելու մասին հայտարարությունը (համապատասխան հիմնավորող փաստաթղթերով) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե այդ ժամկետում քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինն, նոր հանգամանքների ի հայտ գալու հիմքով, այլ որոշում չի կայացնում կամ այլ ավելի կարճ ժամկետ չի սահմանում և դրա մասին պատշաճ ձևով համապատասխան պատասխանատու մասնագետին չի հայտնում:

Հոդված 11.7. ՇՄԶ հավաստագրի գործողության կասեցման կարգը

1. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը օրենսդրության պահանջների խախտման պատճառով ՇՄԶ հավաստագրի գործողությունը կարող է կասեցնել միայն քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից միջնորդություն ներկայացնելու և համապատասխան ~~մասնագիտական~~որակավորման հանձնաժողովի եզրակացության համաձայն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. ~~Մասնագիտական~~Որակավորման հանձնաժողովը հավաստագրի գործողության կասեցման հարցը քննարկում և համապատասխան եզրակացություն է կայացնում սույն օրենքով և հանձնաժողովի կանոնադրությամբ նախատեսված կարգով:

3. Օրենսդրության պահանջների խախտման պատճառով ՇՄԶ հավաստագրի գործողությունը կարող է կասեցվել խախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում~~:~~.# իսկ շարունակվող կամ տևական խախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից՝ երեք ամսվա ընթացքում:

4. Եթե ~~մասնագիտական~~որակավորման հանձնաժողովի կողմից հավաստագրի գործողությունը կասեցնելու մասին հարցի քննարկման վերաբերյալ եզրակացությունը կայացնելուց հետո 15 օրվա ժամկետում հավաստագրի գործողության կասեցման մասին որոշում չի ընդունվում, ապա հավաստագրի գործողության կասեցման հարցը համարվում է մերժված: Այս դեպքում քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը իրավունք չունի նույն հիմքերով երկրորդ անգամ բարձրացնել հավաստագրի գործողության կասեցման հարցը:

Հոդված 11.8. ՇՄԶ հավաստագրի գործողության կասեցման դեպքերը

1. ՇՄԶ հավաստագրի գործողությունը կարող է կասեցվել՝

1) մասնագետի կողմից սույն օրենքով նախատեսված մասնագետների գրանցամատյաններում ամրագրված իր տվյալների փոփոխությունների մասին տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման

մարմնին 15 օրյա ժամկետում Կապի միջոցներով չհայտնելու կամ չներկայացնելու դեպքերում (բացառությամբ գործող տվյալների բազաներից ինքնաշխատ եղանակով տվյալների թարմացման դեպքերի).

2) ՇՄՀ հավաստագրման ենթակա գործունեության իրականացման ժամանակ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների ու պայմանների այնպիսի խախտման դեպքում, որոնք՝

ա. անմիջական վտանգ կամ ռիսկ են պարունակում մարդկանց կյանքի կամ առողջության համար~~, հավաստագրման ենթակա գործունեությունը կարգավորող օրենսդրության պահանջների կոպիտ խախտման կամ~~ .

բ. երկու և ավելի դեպքում պատասխանատու մասնագետի կողմից խախտվել են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական օրենսդրությամբ սահմանված պահանջները.

3) արձանագրված խախտումը պատասխանատու մասնագետի կողմից պատասխանատվության ենթարկվելուց հետո 30 օրվա ընթացքում չվերացնելու դեպքում.

4) պատասխանատու մասնագետի կողմից օրենքով սահմանված վերահսկողություն և հսկողություն իրականացնող անձանց կողմից՝ օրենսդրությանը համապատասխան ստուգումների իրականացմանը խոչընդոտելու կամ պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու դեպքում:

5) մեկ տարվա ընթացքում երրորդ անգամ պատասխանատու մասնագետի կողմից էթիկայի կանոնների խախտման դեպքում:

2. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում ՇՄՀ հավաստագրի գործողությունը կասեցվում է մինչև խախտման պատճառի վերացումը, իսկ 5-րդ կետով նախատեսված դեպքում ՇՄՀ հավաստագրի գործողությունը կասեցվում է վեց ամիս ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հիմքերով ՇՄՀ հավաստագրի գործողությունը կասեցվում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի որոշմամբ, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ:

Հոդված 11.9. ՇՄՀ հավաստագրի գործողության դադարեցումը

1. ՇՄՀ հավաստագրի գործողությունը դադարեցվում է՝

1) հավաստագիր ստանալու համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում.

2) հավաստագրված մասնագետի մահվան դեպքում.

3) մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ սույն օրենքի 11.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի համաձայն հավաստագրի գործողությունը կասեցվելու դեպքում.

4) հավաստագրի գործողության կասեցման ժամկետում կասեցման պահանջների խախտմամբ կասեցված գործունեություն կամ այդ գործունեության առանձին գործառույթ կամ հավաստագրով վերապահված առանձին գործողություն իրականացնելու դեպքում.

5) ՇՄՋ հավաստագրի գործողությունը դադարեցվում է հավաստագրի ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

2. ~~Օրենսդրության պահանջների խախտման պատճառով~~Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքի առկայության դեպքում ՇՄՋ հավաստագրի գործողության դադարեցման դիմում կարող է ներկայացվել խախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում, իսկ շարունակվող խախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից մեկ տարվա ընթացքում, իսկ սույն հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում՝ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվությունը հայտնաբերելու օրվանից՝ 15 օրվա ժամկետում:

3. Սույն հոդվածի առաջին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված խախտումների հայտնաբերման դեպքում քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման ~~մարմինն իրավունք ունի կասեցնել հավաստագրի գործողությունը մինչև դատարանի կողմից հավաստագրի գործողության դադարեցման մասին դիմումի վերաբերյալ կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Այս դեպքում քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման~~ մարմինը պարտավոր է հավաստագրի գործողության դադարեցման մասին դիմումը դատարան ներկայացնել հավաստագրի գործողության կասեցման օրվանից՝ 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետում դիմում չներկայացվելու դեպքում հավաստագրի գործողության ~~կասեցումը~~դադարեցման հիմքը համարվում է վերացված:

4. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով հավաստագրի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք ունի նոր ՇՄՋ հավաստագիր ստանալու ՇՄՋ հավաստագրի դադարեցվելուց մեկ տարի հետո:

5. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով հավաստագրի գործողությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, դադարեցվում է դատական կարգով՝ քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի դիմումի համաձայն:

6. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով հավաստագրի գործողությունը համարվում է դադարեցված դատարանի համապատասխան դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

7. Սույն հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով հավաստագրի գործողությունը դադարեցվում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի որոշմամբ:

8. Սույն հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով հավաստագրի գործողությունը համարվում է դադարեցված՝ հավաստագրված մասնագետի մահվան օրվանից:

Հոդված 11.10. Լիցենզավորված անձանց և ՇՄՀ հավաստագրված մասնագետների ռեգիստրը

1. Լիցենզավորված անձանց և ՇՄՀ հավաստագրված մասնագետների ռեգիստրն ստեղծում և վարում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը: Ռեգիստրի հիմնական նպատակը քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց և ՇՄՀ հավաստագրված մասնագետների վերաբերյալ տվյալների հավաքումը, հաշվառումը, պահպանումը, գրանցամատյանի վարումը, մոնիթորինգի և վարկանիշավորման իրականացումը (ուսումնասիրություն, վերլուծություն, կանխատեսում) և օրենքով նախատեսված դեպքերում դրանց փոխանցումն ապահովելն է:

2. Գրանցամատյանի ձևավորման և վարման կարգը, ինչպես նաև այն պետական մարմինների ցանկը, որոնց տրամադրվում է ռեգիստրից օգտվելու հասանելիություն հաստատում է ~~Հայաստանի Հանրապետության կառավարությունը~~Կառավարությունը:»:

~~**Հոդված 9.**~~**Հոդված 9.** Օրենքի 17-րդ հոդվածի 17-րդ մասում «մշակողին» բառը փոխարինել «կազմող լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտին» բառերով:

Հոդված 10. Օրենքի 20-րդ հոդվածի՝

3. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 20. Պետական քաղաքաշինական կադաստրը, քաղաքաշինական գործունեության մոնիթորինգը և լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորումը»:**

4. 7-րդ մասից հետո լրացնել 8-15-րդ մասերով.

«8. Լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորումը քաղաքաշինության գործունեության վերահսկմանն ու բարելավմանն ուղղված տվյալների հավաքագրման, որակի գնահատման, վերլուծության և արդյունքների գրանցման միջոցառումների համախումբ է, որը ենթադրում է որոշակի մեթոդաբանությունների և գործիքների կիրառում:

10. Վարկանիշավորումը դասակարգվում է, ըստ նվազման չորս աստիճանի՝

5) բարձրագույն.

6) բարձր.

7) միջին.

8) ցածր:

10. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորումը իրականացնում է հետևյալ փուլերով՝

1) տվյալների հավաքագրում.

2) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից սահմանած չափորոշիչներին համապատասխան որակի գնահատում.

3) վերլուծություն և արդյունքների գրանցում:

11. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը որակի գնահատման չափորոշիչներին համապատասխան բարձր, միջին և ցածր աստիճանների վարկանիշավորման նպատակով լիցենզավորված գործունեության որակի գնահատումն իրականացնում է լիցենզավորված անձանց և մասնագետների ~~ռեեստրներում~~գրանցամատյաններում առկա տեղեկությունների հիման վրա՝ ինքնաշխատ եղանակով:

12. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը որակի գնահատման չափորոշիչներին համապատասխան, բարձր աստիճանի վարկանիշավորում ունեցող քաղաքաշինության գործունեության սուբյեկտներին բարձրագույն աստիճանի վարկանիշավորման նպատակով լիցենզավորված գործունեության որակի գնահատումն իրականացնում է լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի կողմից կամավորության սկզբունքով ներկայացված հայտի հիման վրա:

13. Բարձրագույն աստիճանի վարկանիշավորումը իրականացվում է որակի գնահատման հանձնաժողովի միջոցով:

14. Լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման համար օրենքով կարող են նախատեսվել պետական տուրքեր:

15. Սահմանված մոնիթորինգի իրականացման կարգին համապատասխան քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց և ՇՄՋ հավաստագրված մասնագետների աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման մոնիթորինգի իրականացումը ապահովում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը: »:

Հոդված ~~10~~11. Օրենքի 21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 21. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորումը, մասնագիտական որակավորման պահանջներ նախատեսող գործունեության տեսակները, ենթատեսակները և դասային աստիճանները**

4. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակները և համապատասխան ենթատեսակները (որոնց համապաստասխան տրվում են ներդիրներ) դասակարգվում են դասային աստիճանների, որոնց գործունեությունը պահանջում է համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետներ:

6. Քաղաքաշինության բնագավառում, ըստ դասային աստիճանների լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտները իրավունք ունեն լիցենզավորված

գործունեություն իրականացնել սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված համապատասխան ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական գործունեության օբյեկտներում:

4. Քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակներն են՝

1) քաղաքաշինական փաստաթղթերի կազմումը՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի, որը դասակարգվում է I, II և III դասերի, և ունի հետևյալ ենթատեսակներ.

ա. էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ).

բ. ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարաման և գազամատակարարաման համակարգեր).

գ. հիդրոտեխնիկական (հիդրոտեխնիկական կառուցվածքներ և համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ).

դ. ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա).

ե. տրանսպորտային (տրանսպորտային ուղիներ, ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն).

զ. կապ (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, հաղորդակներ, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ).

2) քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը, որը դասակարգվում է I և II դասերի և ունի հետևյալ ենթատեսակները.

ա. ճարտարապետություն (բացառությամբ պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների վերակառուցման և վերականգնման).

բ. քաղաքաշինություն և տարածական պլանավորում.

գ. պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների վերակառուցում, վերականգնում.

դ. բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ.

ե. էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ).

զ. ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարաման և գազամատակարարաման համակարգեր).

է. հիդրոտեխնիկական (հիդրոտեխնիկական կառուցվածքներ և համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ).

ը. ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա).

թ. տրանսպորտային (տրանսպորտային ուղիներ, ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն).

ժ. կապ (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, հաղորդակներ, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ).

ի. ինժեներաերկրաբանական հետախուզում.

3) Շինարարության իրականացում, որը դասակարգվում է I, II և III դասերի, և ունի հետևյալ ենթատեսակները.

ա. բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ.

բ. էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ).

գ. ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարաման և գազամատակարարաման համակարգեր).

դ. հիդրոտեխնիկական (հիդրոտեխնիկական կառուցվածքներ և համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ).

ե. ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա).

զ. տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն).

է. կապ (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, հաղորդակներ, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ).

4) շինարարության որակի տեխնիկական հսկողությունը, որը դասակարգվում է I և II դասերի և ունի հետևյալ ենթատեսակները.

ա. բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ.

բ. էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ).

գ. ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարաման և գազամատակարարաման համակարգեր).

դ. հիդրոտեխնիկական (հիդրոտեխնիկական կառուցվածքներ և համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ).

ե. ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա).

զ. տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն).

է. կապ (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, հաղորդակներ, ընդունիչներ, անտեններ, ուժեղարարներ).

5) քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցումը, որը դասակարգվում է I և II դասերի և ունի հետևյալ ենթատեսակները.

ա. ինժեներաերկրաբանական հետախուզում.

բ. գեոդեզիա.

գ. շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն և անձնագրավորում:

5. Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակների դասակարգումը սահմանվում է, ըստ քաղաքաշինական գործունեության օբյեկտների ռիսկայնության աստիճանների և համապատասխանաբար.

1) I դասի գործունեության տեսակը բնորոշվում է I, II, III, IV և V ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական գործունեության օբյեկտներում ~~գործունեություն իրականացնելու~~աշխատանքների և ծառայությունների մատուցման կարողությամբ,

2) II դասի գործունեության տեսակը բնորոշվում է I, II և III ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական գործունեության օբյեկտներում ~~գործունեություն իրականացնելու~~աշխատանքների և ծառայությունների մատուցման կարողությամբ,

3) III դասի գործունեության տեսակը բնորոշվում է I և II ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական գործունեության օբյեկտներում ~~գործունեություն իրականացնելու~~աշխատանքների և ծառայությունների մատուցման կարողությամբ:»:

Հոդված ~~11~~12. Օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«Քաղաքաշինության բնագավառում շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը սահմանում է ~~Հայաստանի Հանրապետության կառավարությունը~~Կառավարությունը:»:

Հոդված ~~12~~13. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ VIII.1-ին գլխով.

«Գ Լ ՈՒ Խ VIII.1

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Հոդված 26.3. Պատասխանատու մասնագետի էթիկայի կանոնները

1. Քաղաքաշինության բնագավառում էթիկայի կանոնները (այսուհետ՝ Էթիկայի կանոններ) պատասխանատու մասնագետի մասնագիտական գործունեության վարքագծի նորմեր են՝ ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ պատասխանատվության, արհեստավարժության, մասնագիտական կատարելագործման, հանրության, գործընկերների և այլոց իրավունքների և օրինական շահերի ճանաչման վերաբերյալ:
2. Էթիկայի կանոնները տարածվում են ինչպես հանրության, գործընկերների և այլոց հարաբերությունների վրա, այնպես էլ պատասխանատու մասնագետի գործունեությամբ պայմանավորված կամ դրանից բխող ցանկացած այլ հարաբերության վրա:
3. Էթիկայի կանոնները չեն սահմանափակում հասարակական կազմակերպությունների անդամ պատասխանատու մասնագետների համար էթիկայի լրացուցիչ կանոնների կամ կանոնակարգերի ընդունումը:

Հոդված 26.4. Էթիկայի հանձնաժողովի ձևավորման կարգը և ներկայացվող պահանջները

14. Պատասխանատու մասնագետի ~~վարքագծի~~Էթիկայի կանոնների~~, անհամատեղելիության պահանջների, պատասխանատու մասնագետների նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների, շահերի բախման~~ վերաբերյալ հարցերի ուսումնասիրության համար նշանակված քննությունն անցկացնում է պատասխանատու մասնագետների էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ Էթիկայի հանձնաժողով):
15. Էթիկայի կանոնների խախտումները քննելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով ստեղծվում է հասարակական հիմունքներով գործող ~~էթիկայի~~Էթիկայի հանձնաժողով:
16. Էթիկայի հանձնաժողով ձևավորելու իրավական հիմք առաջանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում քաղաքաշինության բնագավառում լիցենզավորող մարմնը (այսուհետ՝ լիցենզավորող մարմին) պատահականության սկզբունքով ձևավորում է Էթիկայի հանձնաժողով: Պատասխանատու մասնագետի գործատուի ներկայացուցիչը չի կարող ներգրավվել ~~էթիկայի~~Էթիկայի հանձնաժողովի կազմում:
17. Էթիկայի հանձնաժողովը կազմված է հինգ անդամից: Յուրաքանչյուր դեպքի համար ձևավորվում է պատասխանատու մասնագետի էթիկայի առանձին հանձնաժողով: Նույն անձը չի կարող երկու անգամից ավելի անընդմեջ ընտրվել հանձնաժողովի անդամ:
18. Էթիկայի հանձնաժողովում ընդգրկվում են երկու ներկայացուցիչ՝ քաղաքաշինության բնագավառի մասնագետների գրանցամատյանում գրանցված համապատասխան գործունեության տեսակի հավաստագիր ունեցող մասնագետներից կամ պատասխանատու մասնագետների իրավունքները պաշտպանող հասարակական կազմակերպություններից, մեկ քաղաքաշինության բնագավառում գիտական աստիճան ունեցող գիտնական, հոքեբան և մեկ իրավաբան:
19. Էթիկայի հանձնաժողովի նախագահը և քարտուղարը նշանակվում են քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնից:

20. Էթիկայի հանձնաժողովի անդամները պարտավոր են յուրաքանչյուր քննվող գործով ստորագրել շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագիր:

21. Շահերի բախման առկայության մասին հայտարարագիր ներկայացնելու առկայության դեպքում հանձնաժողովի անդամը չի մասնակցում գործի քննությանը:

22. Լիցենզավորող մարմնին շահերի բախման առկայության վերաբերյալ չհայտարարագրված տվյալներ հայտնի դառնալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ~~էթիկայի~~Էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են:

23. Էթիկայի հանձնաժողովի անդամների ընտրության կարգը, Էթիկայի հանձնաժողովի անհատական կազմը, Էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը, գործերի քննության կարգը, շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը հաստատում է լիցենզավորող մարմինը:

24. Էթիկայի հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներն ապահովում է լիցենզավորող մարմինը:

25. Էթիկայի հանձնաժողովում քննության են ենթակա պատասխանատու մասնագետի էթիկայի՝ քրեական կամ վարչական պատասխանատվություն չնախատեսող կանոնների խախտումները:

26. Էթիկայի հանձնաժողովը գործի քննությունից հետո ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) քրեական կամ վարչական պատասխանատվություն նախատեսող առերևույթ արարքներ հայտնաբերելու դեպքում կամ մասնագիտական ~~էթիկայի~~Էթիկայի կանոնների խախտման բացակայության հիմքով՝

ա. մերժել դիմումը.

բ. դադարեցնել գործի քննությունը սեփական նախաձեռնությամբ գործի քննությունն սկսելու դեպքերում

2) օրենքով քրեական կամ վարչական պատասխանատվություն չնախատեսող մասնագիտական ~~էթիկայի~~Էթիկայի կանոնների խախտման հաստատման դեպքում, մեկ օրյա ժամկետում՝

ա. Լիցենզավորող մարմին ներկայացնել առաջարկություն մեկ տարվա ընթացքում առաջին անգամ խախտում կատարած պատասխանատու մասնագետին նկատողություն տալու վերաբերյալ տեղեկությունը հավաստագրված մասնագետների գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու համար,

բ. մեկ տարվա ընթացքում կրկին պատասխանատու մասնագետի կողմից ~~էթիկայի կանոնի~~Էթիկայի կանոնների խախտում ~~կատարվելու~~արձանագրվելու դեպքում լիցենզավորող մարմին ներկայացնել առաջարկություն պատասխանատու մասնագետին խիստ նկատողություն տալու վերաբերյալ տեղեկությունը հավաստագրված մասնագետների գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու համար,

գ. մեկ տարվա ընթացքում երրորդ անգամ պատասխանատու մասնագետի կողմից ~~էթիկայի կանոնի խախտում կատարվելու~~Էթիկայի կանոնների խախտման դեպքում լիցենզավորող մարմին ներկայացնել առաջարկություն՝ կասեցնել պատասխանատու մասնագետի հավաստագիրը՝ մեկ ամիս ժամկետով՝ հիմք ընդունելով սույն օրենքի 11.8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը:

17. Էթիկայի հանձնաժողովը ծառայողական քննության ~~արդյունքով~~արդյունքում ընդունած ~~եզրակացությունն~~որոշման մասին մեկ օրվա ընթացքում ~~ուղարկում~~Կապի միջոցներով տեղեկացնում է ծառայողական քննության կողմերին:

18. ~~Էթիկայի հանձնաժողովի կողմից~~ Լիցենզավորող մարմինը, ըստ անհրաժեշտության, սույն հոդվածի 13-րդ մասի 2-րդ կետի «ա», «բ» ~~և «գ»~~ ենթակետերով նախատեսված ~~որոշումների հիման վրա լիցենզավորող մարմինը, ըստ անհրաժեշտության,~~ համապատասխան տեղեկատվությունը փոխանցում է ~~քաղաքաշինության բնագավառի տեսչական մարմնին~~իրավասու մարմիններին՝ համապատասխան պատասխանատու մասնագետին կարգապահական ~~կամ վարչական~~ պատասխանատվության ենթարկելու ~~վարույթը շարունակելու~~ նպատակով:

19. Լիցենզավորող ~~մարմնը~~մարմինը սահմանած կարգով վարում է մասնագիտական էթիկայի խախտում կատարած անձանց գրանցամատյանը:»:

Հոդված ~~13~~14. Օրենքի 27-րդ հոդվածում «դատական կարգով» ~~բառերը փոխարինել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով»~~բառերից առաջ լրացնել «վարչական կամ» բառերով:

Հոդված ~~14~~15. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից ~~վեց~~տասներկու ամիս հետո:

Հոդված ~~15~~16. Սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից՝

1. ~~վեց~~տասներկու ամսվա ընթացքում ~~Հայաստանի Հանրապետության կառավարությունը~~Կառավարությունը հաստատում է՝

1) հավաստագրման և թեստավորման, վերաորակավորման իրականացման կարգը, հավաստագրերի ձևերը.

2) լիցենզավորված անձանց և հավաստագրված մասնագետների ռեգիստրի ձևավորման, տվյալների փոփոխության, լրացման, գրանցամատյանի վարման կարգը, գրանցամատյանից օգտվելու հասանելիություն ունեցող պետական մարմինների ցանկը, լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների վարկանիշավորման և մոնիթորինգի իրականացման կարգը.

~~3)~~3) քաղաքաշինության բնագավառում լիցենզիա և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների~~,~~ և ծառայությունների, ինչպես նաև ըստ ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) քաղաքաշինական գործունեության օբյեկտների դասակարգման ~~և քաղաքաշինության բնագավառում լիցենզիա չպահանջող քաղաքաշինական աշխատանքների և ծառայությունների~~ ցանկերը և մեթոդաբանությունը.

~~4)~~4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունք ունեցող մասնագետների ՇՄՋ կազմակերպման և հավաստագրման հնգամյա ժամանակացույցը:

2. ~~24~~քսանչորս ամսվա ընթացքում ~~Հայաստանի Հանրապետության կառավարությունը~~Կառավարությունը հաստատում է՝

1) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների նախաձեռնությամբ կամ հրավերով օտարերկրյա կազմակերպությունների և մասնագետների մասնագիտական կարճաժամկետ գործունեության թույլտվության տրամադրման կարգը.

2) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ հաստատում է պատասխանատու մասնագետի ~~էթիկայի~~Էթիկայի կանոնները:

3. ~~Վեց~~տասներկու ամսվա ընթացքում քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը հաստատում է՝

4) ~~սույն օրենքի~~Օրենքի 21-րդ հոդվածով սահմանված մասնագիտական գործունեության տեսակներին և ենթատեսակներին համապատասխան պահանջվող մասնագիտական որակավորումների ցանկը.
5) ՇՄՋ ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը և մասնակցությանը ներկայացվող պահանջները, յուրաքանչյուր մասնագիտության գծով շնորհվող կրեդիտների տեսակները, քանակը և դրանց շնորհման չափորոշիչները.
~~6) մասնագիտական հանձնաժողովների անհատական կազմը և աշխատակարգը.~~
~~7)~~6) լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվության և մասնագետների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը.

4. ~~24~~քսանչորս ամսվա ընթացքում քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը հաստատում է՝

1) թեստավորման հարցաշարերը, հայտարարության տեքստին ներկայացվող պահանջները.

2) հաստատում է ~~սույն օրենքի~~Օրենքի 21-րդ հոդվածով սահմանված քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան քաղաքաշինական գործունեության օբյեկտներում աշխատանքների և ծառայությունների իրականացման գործելակարգերը և պատասխանատու մասնագետների մասնագիտական բնութագրերը.

3) հաստատում է ~~մասնագիտական,~~ էթիկայի և որակի գնահատման հանձնաժողովների անհատական կազմը, աշխատակարգը, անդամների ընտրության և գործերի քննության կարգերը, շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը.

4) սահմանում է լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտների կողմից աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման որակի գնահատման չափորոշիչները:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-362-23.08.2022-ՏՀ-011/0), «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-362[1] -23.08.2022-ՏՀ-011/0), «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-362[2] -23.08.2022-ՏՀ-011/0) ԵՎ «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-362[3] -23.08.2022-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					

1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում առաջարկում ենք «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով՝ հաշվի առնելով փոփոխությունների 1-ից ավելի լինելը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված	Հաշվի առնելով այլ օրենսդրական կարգավորումները նախագծի 3-րդ հոդվածում իրականացվել են մի շարք շտկումներ և լրացումներ, որի արդյունքում հոդվածը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. «1. 9-րդ, 23-րդ, 23.1-ին և 26.1-ին հոդվածներում յուրաքանչյուր «լիցենզիայի» և «լիցենզիան» բառերից հետո լրացնել «և (կամ) յուրաքանչյուր ներդիրի» բառերով՝ համապատասխան հոլովաձևորով, իսկ «կամ դրա» բառերը փոխարինել «տրման, լիցենզիայի և (կամ) յուրաքանչյուր ներդիրի» բառերով. 2. 23-րդ հոդվածում «օրենքով սահմանված կարգով և չափով» բառերից հետո լրացնել «, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ» բառերով. 3. 23.1-ին հոդվածի 3-րդ մասը « ինչպես նաև դրանց վերաբերյալ համապատասխան որոշումները» բառերից հետո լրացնել «, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ» բառերով:»:	Ընդունվել է: Իրականացվել է շարադրանքի փոփոխություն:	Ընդունվել է:

3.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդված	Առաջարկում ենք Օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասն ամբողջությամբ խմբագրել՝ հետևյալ բովանդակությամբ. «2. 7-րդ մասից հետո լրացնել նոր 8-րդ մաս, հետևյալ բովանդակությամբ՝ «8. Սույն օրենքով նախատեսված լիցենզավորման և որակավորման ստուգման անցկացման կարգերին համապատասխան լիցենզիան և ներդիրները կարող են տրվել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային համակարգի կիրառմամբ)։»՝ հաշվի առնելով կարգավորման նորույթը:	Ընդունվել է: Իրականացվել է շարադրանքի փոփոխություն:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	6-րդ հոդված	Նախագծի 6-րդ, 7-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածներում առաջարկում ենք սահմանել օրենքը ուժի մեջ է մտնում «վեց» ամսի փոխարեն «տասներկու» ամիս իսկ գործող լիցենզիաների դադարումը «օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ինը ամիս հետո»՝ հաշվի առնելով հասցեատիրոջ վարքագծի համապատասխանեցման ավելի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ողջամիտ ժամկետ սահմանելը:		
5.	ՀՀ կառավարություն	8-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 8-րդ հոդվածը առաջարկում ենք լրացնել նոր 2-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ՝ « 2. որակավորման հանձնաժողովի անհատական կազմը, աշխատակարգը, անդամների ընտրության և գործերի քննության կարգերը, շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը:»՝ հաշվի առնելով, որ լիազորող նորմերը ևս սահմանված են «Լիցենզավորման մասին» օրենքով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	10-րդ հոդվածում	Նախագծի 10-րդ հոդվածում «օրենքի» և «գործընթացը» բառերը փոխարինել «օրենքն» և «գործընթացն» բառերով, իսկ «8-րդ » թիվը «9-րդ » թվով՝ հաշվի առնելով 9-րդ հոդվածով սահմանված կարգավորումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

7.	ՀՀ կառավարություն	13-րդ հոդվածում	Նախագծի 12-րդ և 13-րդ հոդվածում «կարգով» և «որոշմամբ հաստատված կարգով» բառերը փոխարինել «իրավակարգավորումներով» բառերով՝ նկատի ունենալով Նախագծի 8-րդ հոդվածով սահմանված որոշումները ձևաթղթերը և այլն, իսկ «օրենքի» բառը փոխարինել «օրենքն» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում առաջարկում ենք «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառերով՝ հաշվի առնելով փոփոխությունների և լրացումներ 1-ից ավելի լինելը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	«5-րդ» բառից հետո հանել «,» կետադրական նշանն՝ նկատի ունենալով շարունակությունը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված	«համապատասխան հոլովաձևերով» բառերը տեղափոխել «և (կամ) յուրաքանչյուր ներդիր» բառերով» բառերից հետո՝ հաշվի առնելով ազդեցությունը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

4.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդված 5-րդ հոդված	Առաջարկում ենք սահմանել օրենքն ուժի մեջ է մտնում «վեց» ամսի փոխարեն «տասներկու» ամիս՝ հաշվի առնելով հասցեատիրոջ վարքագծի համապատասխանեցման ավելի ողջամիտ ժամկետ սահմանելը: Նախագծի 5-րդ հոդվածում «օրենքի» բառերն առաջարկում ենք փոխարինել «օրենքն» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
«Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով ռիսկայնության աստիճանների դասակարգման հզորությունների ընտրության շրջանակը, նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող «Քաղաքաշինության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում լրացվող 3-րդ մասը առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինության գործունեության օբյեկտներն, ելնելով դրանց ծավալից, նշանակությունից, կարևորությունից ու բարդությունից, ինչպես նաև մարդկանց	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			և շրջակա միջավայրի անվտանգությունից, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հինգ աստիճանների (կատեգորիայի):»		
2.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին տողում առաջարկում ենք «կազմողներ» բառը հանել՝ նկատի ունենալով տեղ գտած վրիպակը, իսկ վերջին տողում «այլն» բառը փոխարինել «պատասխանատու մասնագետներ» բառերով՝ հաշվի առնելով, որ վերջինիս համար Օրենքով ևս սահմանված են իրավունքներ և պարտականություններ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված	Հաշվի առնելով քաղաքաշինության սուբյեկտների սահմանումը, նախագծի 3-րդ հոդվածն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «**Հոդված 3.** Օրենքի 6-րդ հոդվածի ՝ 1. 3-րդ մասի «ա» կետում, 5-րդ և 6-րդ մասերում «մշակողներին», «մշակողը» և «մշակողի» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			փոխարինել «կազմող» բառով. 2. 4-րդ մասի «ը» կետում «այլ բան նախատեսված չէ» բառերը փոխարինել «ամրագրված է նման պահանջ» բառերով. 3. 4-րդ մասի «թ» կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. 4. «թ) օրենքով սահմանված կարգով ապահովել շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված աշխատանքների նկատմամբ:».		
4.	ՀՀ կառավարություն	4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասով Օրենքում լրացվող նոր՝ 7.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետից առաջարկում ենք հանել «դ» ենթակետը՝ հաշվի առնելով այլ օրենսդրական կարգավորումներով արդեն իսկ նման պահանջի առկայությունը: Նախագծում առաջարկում ենք նաև «մասնագիտական եզրակացություն» բառերը փոխարինել «փորձագիտական եզրակացություն» բառերով, «ՀՀ» հապավումը՝ «Հայաստանի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			Հանրապետություն» բառերով, «ստուգում է» բառերը՝ «կարող է ստուգել» բառերով, «մասնագիտական» բառը՝ «որակավորման» բառով (բացառությամբ շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) հասկացությանը), «ռեեստր» բառը՝ «գրանցամատյան» բառով և «Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը՝ «Կառավարություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով՝ իսկ «օրենսդրությամբ» բառից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հաշվի առնելով նույնական եզրույթներ օգտագործելու սկզբունքը, ինչպես նաև գործառույթները, որոնք նույնականացված են «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված «որակավորման հանձնաժողովի» գործառույթների հետ: Նախագծի նույն հոդվածով սահմանված Օրենքում լրացվող նոր՝ 7.1-ին հոդվածի՝ 1) 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետում «իրավունքները» բարից հետո առաջարկում ենք լրացնել «՝ աշխատանքային պայմանագրով նման պահանջի առկայության դեպքում»		

			բառերը, հաշվի առնելով «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված բացառությունները: 2) 4-րդ մասի 1 -ին կետի «դ» ենթակետից առաջարկում ենք հանել «շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտը» բառերը, հաշվի առնելով նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով արդեն իսկ նման անվանակոչման սահմանված լինելը:		
5.	ՀՀ կառավարություն	6-րդ հոդված	Օրենքի 10-րդ հոդվածում լրացվող՝ 1. «զ[1]» կետում առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ գրանցամատյան)» բառերը, 2. «զ[2]» կետն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «զ[2]) հաստատում է քաղաքաշինության բնագավառում լիցենզիա և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և ծառայությունների, ինչպես նաև ըստ ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) քաղաքաշինական գործունեության օբյեկտների դասակարգման ցանկերը և	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: Ընդունվել է:

			մեթոդաբանությունը.»՝ նկատի ունենալով նախորդ խմբագրությունները, 3. «զ[3]» կետում «(այսուհետ ՇՄՋ)» բառերը խմբագրել «(այսուհետ նաև ՇՄՋ)» ձևակերպմամբ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի տեքստում «ՇՄՋ» կրճատ տարբերակի հետ միաժամանակ Նախագծի այլ հոդվածներում կիրառվում է նաև «շարունակական մասնագիտական զարգացում» եզրույթը, 4. «զ[4]» կետում «կարճաժամկետ» բառերից հետո լրացնել «քաղաքաշինության» բառը: Համանման փոփոխություններ առաջարկում ենք իրականացնել նաև 16-րդ հոդվածում՝ հաշվի առնելով Կառավարության լիազորությունների անցումային դրույթները:		
6.	ՀՀ կառավարություն	7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածն առաջարկում ենք լրացնել նոր 1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «1. 3-րդ մասի 21-րդ կետում «բարձր և բարձրագույն» բառերը փոխարինել «IV և V» բառերով.»՝ հաշվի առնելով Օրենքում «բարձր և բարձրագույն»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հասկացությունների բացակայությունը: Ըստ այդմ վերանայել հոդվածի համարակալումը:_____Նախատեսված լրացման արդյունքում առաջարկում ենք լրացնել նոր 3-րդ մաս, որի համաձայն 3-րդ մասի 26-րդ կետի «:» նշանը կփոխարինվի «.» նշանով, իսկ նույն հոդվածի «35-րդ» ենթակետի «: » կետադրական նշանը նույնպես փոխարինել «.» կետադրական նշանով՝ հաշվի առնելով շարունակելիությունը: Համանման փոփոխություններ իրականացնել նաև 16-րդ հոդվածում՝ հաշվի առնելով լիցենզավորող մարմնի լիազորությունների անցումային դրույթները:		
7.	ՀՀ կառավարություն	8-րդ հոդված	Օրենքում լրացվող նոր 5.1-ին գլխի՝ 1) 11.1-ին՝ **ա.** հոդվածի վերնագրում «ընդհանուր» բառն առաջարկում ենք փոխարինել «հիմնական» բառով՝ նկատի ունենալով նույն հոդվածով լրացվող V.1 գլխի վերնագիրը: **բ**. 1-ին մասում «Շարունակական մասնագիտական զարգացումը (ՇՄԶ)»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			բառերը փոխարինել «ՇՄՋ» հապավումով, իսկ 2-րդ մասում՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ֆիզիկական անձը քաղաքաշինության բնագավառում հավաստագրված մասնագետ է համարվում քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից վարվող մասնագետների ռեեստրում գրանցվելուց հետո միայն՝ առաջարկում ենք «(այսուհետ Հավաստագրված մասնագետ)» բառերը հանել և «ռեեստրում» բառի փոխարեն գրել «գրանցամատյանում (այսուհետ Հավաստագրված մասնագետ)» բառերը: **գ.** 10-րդ կետում «բազային» բառը փոխարինել «Քաղաքաշինության բնագավառում բազային» բառերով, իսկ «կրթության այլ որակավորման աստիճան» բառերը «ՇՄՋ հավաստագիր» բառերով՝ նկատի ունենալով բազային կրթության ոլորտը և արդյունքում տրամադրվող ՇՄՋ հավաստագիրը: **դ.** 11-րդ մասն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «11. Վերաորակավորման համար		

			ԲՈՒՀ-ի ակադեմիական կրեդիտների նվազագույն քանակը յուրաքանչյուր վերաորակավորման մասնագիտական կրթական ծրագրի համար սահմանվում է՝ առնվազն 45 ակադեմիական կրեդիտ (ԿԿՓԵՀ):»՝ նկատի ունենալով, որ բառի հապավումները անհրաժեշտ է գրել հայերեն տառադարձությամբ և այլ օրենսդրական ակտերով սահմանված վկայակոչումները: **2)** Քանի որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արդեն իսկ ամրագրված են յուրաքանչյուր անձի՝ 11.5-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված իրավունքները՝ որպես պատասխանատու մասնագետի իրավունքներ, Նախագծում առաջարկում ենք հանել 5-րդ և 6-րդ կետերը և փոխել հաջորդող կետերի համարակալումը: **3)** 11.6-րդ հոդվածի 3-րդ մասի չհամարակալված պարբերությունը՝ 4-րդ մասը, անհրաժեշտ է համարակալել, **4)** 11.7-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում ենք լրացնել «, իսկ		

			շարունակվող կամ տևական խախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից՝ երեք ամսվա ընթացքում» բառերը՝ հաշվի առնելով նշված դեպքի հնարավոր լինելը: **5)** 11.8-րդ հոդվածի 1-ին մասի՝ - 1-ին կետում «15-օրյա ժամկետում» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «Կապի միջոցներով» բառերը՝ նկատի ունենալով արդեն իսկ Օրենքի 7.1-ին հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով սահմանված լինելը: - 2-րդ կետով նախատեսված ՇՄՋ հավաստագրի գործողության կասեցման դեպքերը առաջարկում ենք սահմանել առանձին ա. և բ. ենթակետերով, իսկ «հավաստագրման ենթակա գործունեությունը կարգավորող օրենսդրության պահանջների կոպիտ խախտման կամ» բառերը ամբողջությամբ հանել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խախտման դեպքերը արդեն իսկ սահմանված են		

			11.9-րդ հոդվածի 1-ին մասով: **6)** 11.9-րդ հոդվածի՝ ա. 1-ին մասի 4-րդ ենթակետից հետո համարակալել նաև 5-րդ ենթակետը: բ. 2-րդ մասի «Օրենսդրության պահանջների խախտման պատճառով» բառերը առաջարկում ենք փոխարինել «Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքի առկայության դեպքում» բառերով՝ հաշվի առնելով արդեն իսկ սահմանված խախտման դեպքերը: գ. 3-րդ մասով նախատեսվել է հավաստագրի գործողությունը կասեցնելու հիմք: Բացի այդ, նույն մասում նախատեսվել է հավաստագրի գործողության կասեցումը վերացած համարելու վերաբերյալ կարգավորում: Հաշվի առնելով, որ 11.8-րդ հոդվածի հիմքով կասեցումը արդեն իսկ կիրառվել է, առաջարկում ենք «մարմինն իրավունք ունի կասեցնել հավաստագրի գործողությունը մինչև դատարանի կողմից հավաստագրի գործողության		

			դադարեցման մասին դիմումի վերաբերյալ կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Այս դեպքում քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման » բառերը հանել: Նույն մասում առաջարկում ենք նաև «կասեցումը» բառը փոխարինել «դադարեցման հիմքը» բառերով՝ հաշվի առնելով վարույթը դեռ ավարտված չէ:		
8.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդված	Նախագծում լրացնել նոր 9-րդ հոդված և խմբագրել շարունակվող հոդվածների համարակալումները «9. Օրենքի 17-րդ հոդվածի 17-րդ մասում «մշակողին» բառը փոխարինել «կազմող լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտին» բառերով:»՝ նկատի ունենալով օրենքով սահմանված գործունեության տեսակը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
9.	ՀՀ կառավարություն	10-րդ հոդված Խմբագրված 11-րդ հոդված	Օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի բոլոր կետերում «օբյեկտներում գործունեություն իրականացնելու» բառերը փոխարինել «գործունեության օբյեկտներում աշխատանքների և ծառայությունների մատուցման» բառերով՝ նկատի ունենալով սահմանված գործունեության	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			տեսակների:		
10.	ՀՀ կառավարություն	12-րդ հոդված նոր համարակալմամբ 13-րդ հոդված	Օրենքում լրացվող նոր՝ 8.1-ին գլխի 26.4-րդ հոդվածի՝ **1**. 1-ին մասում առաջարկում ենք «էթիկայի» բառը փոխարինել «Էթիկայի» բառով, **2.** 1-ին մասից հանել «անհամատեղելիության պահանջների, պատասխանատու մասնագետների նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների, շահերի բախման» բառերը, **3.** 3-րդ մասում «լիցենզավորող մարմինը» բառերից հետո լրացնել «(այսուհետ՝ լիցենզավորող մարմին)» կրճատ անվանումը: **4**. 13-րդ մասի 2-րդ կետից և շարունակաբար 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերն –առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2) օրենքով քրեական կամ վարչական պատասխանատվություն չնախատեսող մասնագիտական Էթիկայի կանոնների	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			խախտման հաստատման դեպքում, մեկ օրյա ժամկետում՝ ա. Լիցենզավորող մարմին ներկայացնել առաջարկություն մեկ տարվա ընթացքում առաջին անգամ խախտում կատարած պատասխանատու մասնագետին նկատողություն տալու վերաբերյալ տեղեկությունը հավաստագրված մասնագետների գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու համար, բ. մեկ տարվա ընթացքում կրկին պատասխանատու մասնագետի կողմից էթիկայի կանոնների խախտում արձանագրվելու դեպքում լիցենզավորող մարմին ներկայացնել առաջարկություն պատասխանատու մասնագետին խիստ նկատողություն տալու վերաբերյալ տեղեկությունը հավաստագրված մասնագետների գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու համար, գ. մեկ տարվա ընթացքում երրորդ անգամ պատասխանատու մասնագետի		

			կողմից Էթիկայի կանոնների խախտման դեպքում լիցենզավորող մարմին ներկայացնել առաջարկություն՝ կասեցնել պատասխանատու մասնագետի հավաստագիրը՝ մեկ ամիս ժամկետով ՝ հիմք ընդունելով սույն օրենքի 11.8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը: 20. Էթիկայի հանձնաժողովը ծառայողական քննության արդյունքում ընդունած որոշման մասին մեկ օրվա ընթացքում Կապի միջոցներով տեղեկացնում է ծառայողական քննության կողմերին: 21. Լիցենզավորող մարմինը, ըստ անհրաժեշտության, սույն հոդվածի 13-րդ մասի 2-րդ կետի «ա», «բ» ենթակետերով նախատեսված համապատասխան տեղեկատվությունը փոխանցում է իրավասու մարմիններին՝ համապատասխան պատասխանատու մասնագետին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով: 22. Լիցենզավորող մարմինը		

			սահմանած կարգով վարում է մասնագիտական էթիկայի խախտում կատարած անձանց գրանցամատյանը:»՝ հաշվի առնելով լիցենզավորող մարմնին տրված լիազորությունը:		
11.	ՀՀ կառավարություն	13-րդ հոդված Խմբագրված 14-րդ հոդված	Նախագծի 13-րդ հոդվածում՝ Օրենքի 27-րդ հոդված. առաջարկում ենք «բառերը փոխարինել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով» բառերը փոխարինել «բառերից առաջ լրացնել «վարչական կամ» բառերով՝ հաշվի առնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված գործողությունների ոլորտները:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
12.	ՀՀ կառավարություն	14-րդ հոդված, խմբագրված 15-րդ հոդված	Նախագծի 14-րդ հոդվածում առաջարկում ենք սահմանել օրենքը ուժի մեջ է մտնում «վեց» ամսի փոխարեն «տասներկու» ամիս՝ հաշվի առնելով հասցեատիրոջ վարքագծի համապատասխանեցման ավելի ողջամիտ ժամկետ սահմանելը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

13.		15-րդ հոդված, խմբագրված 16-րդ հոդված	Նախագծի 15-րդ հոդվածի՝ 1) 1-ին և 3-րդ մասերում առաջարկում ենք խմբագրել նաև իրավական ակտերի մշակման ժամկետները «վեց» ամսի փոխարեն նախատեսելով «տասներկու» ամիս ժամկետ: 2) 2-րդ մասի 1-ին կետի սկզբում առաջարկում ենք նաև լրացնել «քաղաքաշինության բնագավառի պետական մարմնի ներկայացմամբ՝» բառերը՝ նկատի ունենալով որպես բնագավառի պետական կառավարման մարմնին տրված լիազորություն: 3) 2-րդ մասում և 4-րդ մասում «24» թիվը փոխարինել «քսանչորս» բառով, իսկ Նախագծի 15-րդ հոդվածում նշված «սույն օրենքի» բառերը փոխարինել «Օրենքի» բառով: 4) 3-րդ մասի 3-րդ կետը և 4-րդ մասի 3-րդ կետում «մասնագիտական» բառը ամբողջությամբ հանել՝ նկատի ունենալով «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծով արդեն իսկ սահմանված է նման կարգավորում:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
«Քաղաքաշինության բնագավառում իրավախախտման համար պատասխանատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					

1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում առաջարկում ենք «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով՝ հաշվի առնելով փոփոխությունների 1-ից ավելի լինելը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.		1-ին հոդված	Նախագծում «քաղաքաշինության գործունեության սուբյեկտ, պատասխանատու մասնագետ» կամ «քաղաքաշինության գործունեության սուբյեկտներ և պատասխանատու մասնագետներ» ձևակերպումներն առաջարկում ենք վերանայել՝ նկատի ունենալով, որ ««Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամշակված նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված փոփոխության արդյունքում պատասխանատու մասնագետը ևս համարվում է քաղաքաշինության գործունեության սուբյեկտ: Այս կապակցությամբ առաջարկում ենք «սուբյեկտը, պատասխանատու մասնագետը» և «աշխատանք իրականացնողի և (կամ) պատասխանատու մասնագետի» կամ «և պատասխանատու մասնագետներ» բառերը ամբողջ նախագծում փոխարինել «սուբյեկտն» և «քաղաքաշինության գործունեության	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			սուբյեկտի» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:		
3.	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Նախագծի՝ 1) 1-ին հոդվածում առաջարկում ենք հանել «իրենց համապատասխան հոլովաձևերով» բառերը, 2) 1-ին հոդվածում «քաղաքաշինության գործունեության սուբյեկտներ և պատասխանատու մասնագետներ» բառերով» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «համապատասխան հոլովաձևերով» բառերը՝ նկատի ունենալով, որ նախատեսված կարգավորման արդյունքում կառաջանա բովանդակային անհամապատասխանություն:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածում առաջարկում ենք «վերնագրերում և» բառերից հետո լրացնել «կամ» բառը՝ նկատի ունենալով «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտման համար պատասխանատվության մասին» օրենքի 10-րդ և 12-րդ հոդվածների վերնագրերում «լիցենզիայի» բառի բացակայությունը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

5.	ՀՀ կառավարություն	12-րդ հոդված 1-ին մաս	Օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածներում առաջարկում ենք «՝ իրենց համապատասխան հոլովաձևերով» բառերը տեղափոխել վերջակետից առաջ՝ նկատի ունենալով, որ նախատեսված կարգավորման արդյունքում կառաջանա բովանդակային անհամապատասխանություն:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	13-րդ հոդված	Առաջարկում ենք սահմանել օրենքը ուժի մեջ է մտնում «վեց» ամսի փոխարեն «տասներկու» ամիս՝ հնարավորություն ընձեռելով հասցեատերերին համապատասխանեցնել իրենց վարքագիծը սահմանված պահանջներին:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: